

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
Դավիթ Հովհաննիսյան**

Սառը պատերազմի ավարտից հետո շրջանառության մեջ դրվեց «Քաղաքակրթությունների բախում» գաղափարա-դիցաբանական համակարգը, որն՝ իր բոլոր գոյություն ունեցող տարբերակներով, հասարակությունների զարգացման էներգիայի աղբյուր է դիտում միջքաղաքակրթական կոնֆլիկտը:

Մեր կարծիքով, յուրաքանչյուր պատմական դարաշրջանին համապատասխանում է միայն մեկ քաղաքակրթություն: Շատ են մշակույթները, մշակութային համակարգերը, որոնցից յուրաքանչյուրն իր ներքին ներուժին համապատասխան լուծում է քաղաքակրթությանն ադապտացվելու խնդիրը: Կան մշակույթներ, որոնք այդ խնդիրը լավ են լուծում, կան, որ տեղյակ չեն տվյալ պատմական ժամանակահատվածին բնորոշ եւ այդ պատմական շրջանի էությունը առավելագույնս արտահայտող քաղաքակրթության մասին:

Ադապտացման էությունը կտրականապես տարբերվում է բախման էությունից: Այն չի պարունակում պայքարի, պատերազմի, բռնության գաղափարներ: Միաժամանակ այն չի կապում զարգացման խնդիրը էական մշակութային արժեքների խաթարման հետ:

Այս մոտեցումը թույլ է տալիս դիտարկել կոնֆլիկտների լուծումը որպես ադապտացման խնդիր, այսինքն՝ ժամանակակից ինֆորմացիոն քաղաքակրթությանը համակերպվելու, համապատասխանելու եւ վերջինիս սկզբունքային օրենքների շնորհիվ՝ զարգանալու, կոնսոլիդացվելու եւ այդ ճանապարհով լուծումներ գտնելու հրամայական:

Սա նաեւ նշանակում է, որ բախումների նկատմամբ կարելի է կիրառել ոչ թե դիցաբանական-գաղափարական, այլ խիստ գիտական ռացիոնալ մոտեցումներ, քանի որ ադապտացման համակարգի եւ գործընթացի ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել մի շարք կարեւոր հասկացություններ եւ տարրեր, որոնք ենթակա են վերլուծման, հաշվարկման, ձեւափոխման եւ այլն: Ինքնին հասկանալի է, որ այս ճանաչման գործընթացը կարիք ունի մեթոդաբանության, որի շնորհիվ հնարավոր է դառնում խուսափել սեմիոտիկ (նշանաբանային) թակարդներից:

«Բազմաթիվ մշակույթներ–մեկ քաղաքակրթություն» մոտեցումը պահանջում է պատասխանել մի կարեւոր հարցի. որո՞նք են այն ադապ-

տացիոն հնարավորությունները, որ թույլ են տալիս մշակույթներին փոփոխվել եւ համակերպվել նոր քաղաքակրթական դաշտի հետ: Այս հարցից բխում է հաջորդը. որո՞նք են այն մեխանիզմները, որոնց միջոցով իրականացվում են այդ հնարավորությունները:

Քաղաքակրթության այս կամ այն արդյունքի հետ հանդիպելիս՝ մշակույթը փորձում է ձեւավորել պատասխան: Հնարավոր պատասխանների դասակարգման փորձ կատարել է Ա.Թոյնբիմը՝ դիտարկելով Քրիստոսի ծննդից մեկ դար առաջ եւ մեկ դար հետո ընդգրկող ժամանակահատվածը, երբ հրեաները հելլենիզմի ազդեցության տակ բաժանվեցին երկու «կուսակցության»: Պաղեստինում դրանցից մեկը կոչվում էր «զելոտ», մյուսը՝ «հերովդեսցի»: Ա.Թոյնբիմ այսպես է նկարագրում այդ երկու կուսակցությունները. *«Ձելոտը այն մարդն է, որը հայտնիի մեջ անհայտից փրկություն է որոնում, ու եթե նա կռվում է իրեն մարտավարությամբ գերազանցող եւ հզոր նորածեւ զենք ունեցող հակառակորդի հետ, ապա պատասխանում է նրանով, որ հատուկ ջանասիրությամբ ու ճշգրտությամբ է կիրառում իր ավանդական ռազմական արվեստը... Հերովդեսցին այն մարդն է, որը գործում է մի սկզբունքով. անհայտից պահպանվելու ամենաարդյունավետ ճանապարհը՝ նրա գաղտնիքին տիրապետելն է, ու երբ «հերովդեսցին», կանգնելով իրենից փորձված եւ լավ զինված հակառակորդի դիմաց, դժվար վիճակի մեջ է ընկնում, ապա պատասխանում է մարտահրավերին նրանով, որ հրաժարվում է իր ավանդական ռազմական արվեստից եւ սովորում է կռվել թշնամու հետ նրա իսկ զենքով եւ նրա մարտավարությամբ տիրապետելով»:*

Այսպիսով, Ա.Թոյնբիի կարծիքով, կա մարտահրավերին պատասխանելու միայն երկու հնարավոր ձեւ՝ զելոտություն եւ հերովդեսականություն, որոնք վերլուծելով՝ նա, ի դեպ, օգտագործում է երկու տարբեր համակարգերի պատկանող տերմիններ. «ավանդական ռազմական արվեստ», որը մշակույթի ոլորտին պատկանող հասկացություն է, եւ «մարտավարություն» ու «հզոր նորածեւ զենք», որոնք քաղաքակրթական հասկացություններ են:

Այս հիմնահարցն ավելի հանգամանալից ուսումնասիրելու համար անհրաժեշտ է օգտագործել լրացուցիչ հասկացություններ, քանի որ Ա.Թոյնբիի ներկայացրած կաղապարը չի արտահայտում մի շարք այլ հնարավորություններ, օրինակ, Մ.Բախտինի բնութագրած դեպքը՝ «օտարի յուրացումը՝ առանց հարազատացման» (սա այն դեպքն է, երբ օտար քաղաքակրթական արդյունքը փոխառվում եւ օգտագործվում է՝ պահպանելով վերջինիս օտար լինելու մասին միտքը կամ հիշողությունը): Մեկ այլ իրավիճակ նկարագրում է ինքը՝ Ա.Թոյնբիմը՝ անվանելով այն «մասնակի յուրացում»: Կարելի է բերել եւ այլ օրինակներ, սակայն արդեն իսկ

հասկանալի է, որ «գելոտ-հերովդեսցի» կաղապարը ոչ միայն չի կարող ամբողջովին նկարագրել հնարավոր տարբերակների ամբողջությունը, այլ նաև մեթոդաբանորեն ճիշտ չի կառուցված, քանի որ տարբեր մակարդակների պատկանող համակարգերի հասկացությունները համեմատում եւ ուսումնասիրում է նույն դաշտի մեջ:

Մեր տեսակետից, անհրաժեշտ է հստակ տարբերակել հասարակությունների, առանձին խմբերի ինքնագիտակցությունը պայմանավորող, նրանց գնահատականները հիմնավորող եւ իրար հետ փոխկապակցության մեջ մտնելու հնարավորություններն ապահովող երեք հիմնական համակարգեր, որոնք տարբեր հարթություններում են գտնվում:

Առաջինն ունի մակրոհամակարգային բնույթ. այն ձեւավորվում է հիմնական արժեքների բազայի վրա եւ կազմում արժեքային հարաբերակցությունը, որը թույլ է տալիս, հիմնվելով այդ արժեքային սանդղակի վրա, գնահատել գործընթացները, երեւույթները եւ այլն:

Երկրորդն ունի ենթակառուցվածքային բնույթ. այն կազմված է մշակութային նորմերից եւ ուղղակիորեն բխում է արժեքային համակարգից, ինքն իր հերթին ծնելով եւ արտադրելով քաղաքակրթական կառույցներ, որոնք հանդես են գալիս որպես տվյալ պատմական ժամանակահատվածի քաղաքակրթության արդյունք:

Երրորդը քաղաքակրթական կառույցներն են, որոնք արտադրում են իրենց արդյունքը՝ ուղղակիորեն բխեցնելով այն մշակութային նորմերից եւ անուղղակիորեն՝ արժեքային համակարգից:

Այն պահից, երբ, Թ.Յոբսի արտահայտությամբ, մարդիկ դադարեցին իրար ուտել, մարդկային կյանքը դարձավ հիմնարար արժեք: Այդ արժեքը սակրալացվեց եւ որպես մշակութային նորմ գրանցվեց «Մի՛ սպանիր» պատվիրանի ձեւով՝ հուղայականության եւ քրիստոնեության մեջ եւ նման ձեւակերպումներով՝ այլ մշակույթներում: Այս ենթակառուցվածքը ծնեց օրենքներ, իրավապահ մարմիններ, բանտեր, պետության եւ հասարակական վերաբերմունքն արտահայտող մարմիններ եւ մեխանիզմներ:

Մեկ այլ օրինակ, որը կոչված է ավելի ընդլայնելու ներկայացվող կաղապարի կիրառումը: Ժամանակակից աշխարհի համար նավթն արժեք է, քանի որ սպասարկում է հիմնարար՝ «մարդկային կյանք», «մարդկության գոյություն» բազային արժեքը, որի շուրջ ձեւավորվում է այս բազային արժեքի հետ կապակցված արժեքային մակրոհամակարգ:

Նավթի՝ երկրագնդի վրա գտնվող պաշարները եւ այն դեպի քաղաքակրթական կառույցներ հասցնող կոմունիկացիոն ուղիները ամբողջական ենթակառուցվածք են:

Հասկանալի է, որ քաղաքակրթական կառույցները՝ նավթամշակման գործարաններն են, գիտահետազոտական հիմնարկները, բենզալցակա-

յանները եւ այլն: Այդ նյութը որպէս հունք օգտագործելու հնարավոր կիրառումների մասին ստեղծված գաղափարները նավթային պաշարների եւ դրանց տեղափոխման ենթակառուցվածքը դարձնում են մշակույթի փաստ: Եվ մշակույթներն իրարից տարբերվում են հենց այդ գաղափարների զարգացածության աստիճանով: Կան լոկալ մշակույթներ, որոնք այսօր էլ օգտագործում են հում նավթը որպէս դեղամիջոց կամ ծխական գործողությունների համար: Ճապոնական մշակույթը ստեղծել է այնպիսի քաղաքակրթական համակարգ, որի շնորհիվ այս երկիրը, որ չունի իր սեփական նավթային պաշարները, կարողանում է մշակել հումքն այն աստիճանի, որ գրեթէ չտա կորուստներ: Հակառակ օրինակ. Պարսից ծոցի շատ նավթային երկրներ անօգուտ վառում են հումքի այն մասը, որը չեն կարողանում մշակել՝ մշակույթը թույլ չի տալիս:

Իրարից անկախ եւ, հաճախ, անջատ գործող հասարակությունների կապերը, արժեքների եւ մշակութային նորմերի փոխանակումը, որպէս կանոն, տեղի է ունենում քաղաքակրթական արդյունքի հարթության մեջ: Երկաթե վարագույրը անջատել էր Խորհրդային Միությունը մնացյալ աշխարհից, սակայն այն չկարողացավ փակել ձայնասկավառակների, կոկալոլայի, ջինսերի ներթափանցումը իր արժեքային դաշտ, ինչն էլ կործանարար եղավ այդ պետության, այսինքն՝ քաղաքակրթական կառույցի համար: Խորհրդային Միությունը կազմող բոլոր ազգերը պահպանվեցին՝ ունենալով իրենց իդենտիֆիկացման արժեքային հնարավորությունները եւ պահպանված մշակույթները, իսկ հնացած քաղաքակրթական կառույցը ոչնչացավ:

Ճապոնական, սկանդինավյան, վերջին շրջանում՝ չինական մշակույթները, ընդհակառակը, դրսեւորում են հաջող ադապտացման դրական օրինակներ, որոնց վերլուծությունը նույնպէս թույլ է տալիս խոսել ոչ թե «զելլոտականության» կամ «հերովդեսականության», այլ՝ ադապտացման հնարավորությունների մասին:

Գլոբալ աշխարհը՝ իր զարգացման ներկա մակարդակի վրա գտնվող ինֆորմացիոն եւ տրանսպորտային հնարավորություններով, անհույս է դարձնում բոլոր փորձերը մեկուսանալու եւ փակվելու՝ մրցակցող արժեքային համակարգերից պահպանվելու նպատակով: Քաղաքակրթական արդյունքը, ընդունելով նորանոր տեսքեր եւ ձեւեր, հորդառատ հոսքերով ողողում է մշակույթները՝ ստիպելով վերջիններիս գործել եւ արձագանքել: Կարելի է այս մարտահրավերին տալ *ճապոնական պատասխան*. ողողել արեւմտյան շուկաները տոյոտաներով եւ ջիվիսիներով՝ միաժամանակ պահպանելով ճապոնական մշակույթն իր նորմերով եւ դրանց քաղաքակրթական-ծիսային արտահայտություններով, որոնց առկայությունը ստեղծում է այնպիսի հզոր գտիչ, որը թույլ չի տալիս, որպէսզի այդ

արժեքային համակարգի համար օտար զանգվածային արդյունքները լուրջ տեղ զբաղեցնեն սեփական հասարակական գիտակցության մեջ:

Կարելի է տալ *արեւելյան պատասխան*. Չախջախել վիդեոակունքները եւ ծեծել չժաժկված կանանց, նավթային եւ այլ նման տիպի եկամուտները ներդնել պատերազմ սպասարկող արդյունաբերության մեջ՝ չնտածելով հասարակության փոխընկալմանն ուղղված հնարավորությունների զարգացման մասին:

Մյուս հնարավոր արձագանքը Խորհրդային Միության փլուզումն էր, որի իրական պատճառն այն էր, որ պետության եւ հասարակության առավել ակտիվ եւ կրթված մասը հրաժարվեց իր արժեքային համակարգից եւ ձգտեց առանց ադապտացման՝ ձեռք բերել իր համար օտար, բայց բաղձալի արժեքներ, որոնց մասին պատկերացումը թերի էր եւ արատավոր, քանի որ ձեւավորվել էր միմիայն քաղաքակրթական արդյունքի մասին ստեղծված պատկերացումների հիման վրա:

Այսպիսով, քաղաքակրթական համատեքստում մշակութային ադապտացման հիմնահարցի ուսումնասիրության իրական ճանապարհը կապված է մշակույթների ադապտացման գործընթացի գիտական վերլուծության հետ, ինչը հնարավորություն կտա վերլուծել արդեն ադապտացման կոնկրետ միջոցները եւ կադապարները:

**ՌՈՒՍ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ԱՇԽԱՐՀԱՌԱՋՍԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ
Ռուբեն Սաֆրաստյան**

Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի եւ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի անցյալ տարվա վերջի եւ այս տարվա սկզբի երկու հանդիպումները, ինչպես նաեւ այդ հանդիպումների ընթացքում քննարկված խնդիրները եւ արդյունքում ստորագրված փաստաթղթերի բովանդակությունը ազդարարեցին ռուս-թուրքական մերձեցման փաստի մասին: Այն, ինչի նախանշանները տեսանելի էին մասնագետների համար վերջին տարիների ընթացքում, այժմ արդեն կարելի է բնութագրել որպես աշխարհառազմավարական բնույթի իրական գործընթացի սկզբնական փուլ:

Մեզանում դեռեւս թարմ է հիշողությունն այն մասին, թե ինչպես 1920թ. քեմալական Թուրքիան եւ բոլշեւիկյան Ռուսաստանը, ուժերը ընդհանուր թշնամու՝ Անտանտի պետությունների դեմ համախմբելու նպատակով Յայաստանի հաշվին եկան գաղտնի համաձայնության եւ վերջ դրեցին դարավոր հակամարտությանը, մասնավորապես՝ Կովկասի համար: Քեմալականները համաձայնեցին չխոչընդոտել Ռուսաստանի կողմից Յարավային Կովկասի փաստացի վերանվաճման գործընթացին՝ փոխարենը ստանալով ազատ գործելու հնարավորություն Յայաստանի դեմ: Արդյունքում՝ «խորհրդայնացված» Յայաստանը պարտադրված էր ստորագրել Կարսի 1921թ. անարդարացի պայմանագիրը, որով եւ լույս աշխարհ բերվեցին Յայաստանի ներկայիս խիստ աղճատված սահմանները:

Այնպես որ, հայաստանյան քաղաքական ընտրանու որոշ ներկայացուցիչների կողմից հնչեցված մտավախությունն առ այն, որ ներկայումս այդ երկու պետությունների միջեւ տեղի ունեցող մերձեցումը կարող է նաեւ բացասական ազդեցություն ունենալ Յայաստանի վրա, մասնավորապես՝ թուլացնել մեր դիրքերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, հիմնավորված է թեկուզ այնքանով, որ արդեն արձանագրվել է համանման պատմական նախադեպ: Սակայն ձեւավորվող իրադրության անկողմնակալ եւ համակողմանի վերլուծության հիման վրա է միայն հնարավոր փարատել կամ հաստատել այդ մտավախությունը:

Անկայունության ու հակամարտության շրջան

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանն ու Թուրքիան հայտնվեցին որակապես նոր աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում, որի հիմնական գծերը հետեւյալն էին.

Առաջին անգամ հարյուրամյակների ընթացքում (եթե հաշվի չառնենք 1918-1920թթ.) նրանք այլևս չունեին ցամաքային սահման՝ ունենալով Չարավային Կովկասը որպես միջանկյալ գոտի:

Նրանք առաջին անգամ տասնամյակների ընթացքում այլևս չէին պատկանում հակամարտող ռազմաքաղաքական դաշինքների:

Ռուսաստանը, սրընթաց կորցնելով իր ռազմատնտեսական ներուժը, գաղափարական առանցքը եւ քաղաքական կամքը, ի վիճակի չէր իր աշխարհաքաղաքական ազդեցության ոլորտում պահպանել նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող տարածաշրջանները, այդ թվում նաեւ Չարավային Կովկասը եւ Կենտրոնական Ասիան:

Ստեղծված իրադրությունը հանգեցրեց ուժային որոշակի վակուումի առաջացմանը վերը նշված տարածաշրջաններում, քանի որ Արեւմուտքը հիմնականում զբաղված էր Բալկանյան թերակղզում ընթացող գործընթացների վրա իր հսկողությունը հաստատելով եւ նրանց՝ իր նախընտրած ուղով ուղղորդելով: Այս պայմաններում Թուրքիան սկսեց ակտիվորեն տարածել իր ազդեցությունը Չարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում՝ հիմնվելով սկզբնական փուլում պանթուրքիզմի գաղափարաքաղաքական հիմնադրույթների վրա:

Էությանը պանթուրքիստական իր նպատակները Թուրքիան քողարկում էր նախկին ԽՍՀՄ մահմեդական հանրապետություններում «թուրքական մոդելի»¹ տարածման անհրաժեշտությամբ: Այդ քաղաքականությունը ստանում էր Արեւմուտքի, գլխավորապես ԱՄՆ աջակցությունը, քանի որ վերջինս մտավախություն ուներ, որ այդ երկրները կարող են հայտնվել արմատական քաղաքականացված իսլամի ազդեցության ոլորտում: Բացի այդ, ԱՄՆ-ում դեռեւս վառ էին սառը պատերազմի ժամանակաշրջանին հատուկ ընկալումները, որոնց շրջանակներում ողջունելի էր համարվում տարաբնույթ թուրքական ներգրավվածությունը նախկին ԽՍՀՄ տարածքում՝ ի հակազդեցություն Ռուսաստանի:

Այդ տարիներին՝ 1990-ական թթ. առաջին կեսին թուրք-ռուսական հարաբերություններն ունեին խիստ անկայուն բնույթ, ինչը պայմանավորված էր նրանց միջեւ սուր աշխարհառազմավարական հակամարտությամբ: Թուրքիան օգտագործում էր բոլոր հնարավորությունները, բացի ռազմական ուղղակի միջամտությունից, տարածելու իր ազդեցությունը ոչ միայն

¹ «Թուրքական մոդելի» հայեցակարգի հիմնական տարրերն են. իսլամի՝ որպես քաղաքական գործոնի, դերի խիստ սահմանափակումը եւ զարգացման արեւմտամետ ուղղվածությունը: 1990-ականների կեսերին արդեն ակնհայտ էր, որ այդ հայեցակարգը չի կարող իրականացնել թուրքական ազդեցության տարածման գաղափարական-քաղաքական հիմնավորման գործառույթը: Ներկայումս Թուրքիայում տեղի են ունենում նրա խոր վերափոխաստավորում ու վերանշակում:

Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում, այլ նաեւ Հյուսիսային Կովկասում եւ Ռուսաստանի թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված այլ տարածքներում: Ռուսաստանն, իր հերթին, ԽՍՀՄ փլուզման անմիջապես հետեւած քառսի շրջանից հետո, փորձում էր համախմբել իր խիստ սակավացած ներուժը եւ խոչընդոտել Թուրքիայի ծրագրերի իրականացմանը: Հնարավորություն չունենալով այդ փուլում իրականացնել լայնածավալ հակազդեցություն՝ Ռուսաստանը կենտրոնացրեց իր ուշադրությունը Հարավային Կովկասում բռնկված հակամարտությունների վրա՝ օգտագործելով դրանք որպես միջոց՝ իր ազդեցության վերջին հանգրվանները այս տարածաշրջանում պահպանելու համար:

Այս տեսակետից հատկանշական էր Ղարաբաղյան հակամարտությունը, որը դարձավ Հարավային Կովկասում թուրք-ռուսական հակամարտության կիզակետը: Թուրքիան օգնություն ցույց տվեց ադրբեջանական կողմին, իսկ Ռուսաստանը՝ հայկականին: Պատահական չէ այն փաստը, որ երկու երկրների հակամարտությունը այս դեպքում դարձավ ամենասուրը վերջին տասնամյակների ռուս-թուրքական հարաբերությունների պատմության ողջ հոլովոյթում: Թուրքիան 1992-1993թթ. Հայաստանի նկատմամբ կիրառեց ուժ գործադրելու սպառնալիքներ, ինչին հետեւեց Ռուսաստանի կտրուկ հակազդեցությունը. ի լուր աշխարհի ազդարարվեց պատրաստակամություն՝ Թուրքիայի դեմ կիրառել միջուկային զենք: Երկու պետությունները այդ շրջանում հանդես էին գալիս ոչ միայն որպես ռազմավարական ախոյաններ, այլեւ ընկալում էին միմյանց որպես ռազմական վտանգ ներկայացնող հակառակորդներ: Այս առումով, բնութագրական է թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 1994թ. արած հայտարարությունն այն մասին, որ Ռուսաստանն է այն միակ երկիրը, որ ռազմական առումով վտանգ է ներկայացնում Թուրքիայի համար:

Թեեւ Ղարաբաղյան հակամարտության զինված փուլն ավարտվեց հայկական կողմի հաղթանակով, իսկ Ռուսաստանի ցուցաբերած վճռականությունը զգալիորեն կասեցրեց Հարավային Կովկասում Թուրքիայի դիրքերի ուժեղացման գործընթացը, սակայն Թուրքիային հաջողվեց իր ներկայությունը հաստատել մեր տարածաշրջանում եւ դառնալ կարելոր գործոն: Ռուսաստանն էլ թեեւ ունեցավ մեծ աշխարհաքաղաքական կորուստներ, սակայն կարողացավ պահպանել իր ազդեցության որոշ ոլորտները, ինչպես նաեւ իր ոչ այնքան խոշոր ռազմակայանները: Վերջին հանգամանքը, ռազմականից ավելի, ուներ աշխարհաքաղաքական նշանակություն եւ հնարավորություն տվեց Հարավային Կովկասում Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ հաստատել ուժերի որոշակի հաշվեկշիռ: Այդպիսով հիմք դրվեց երկկողմանի հարաբերությունների կայունացման համար:

Կայունացում

Արդեն 1990-ականների երկրորդ կեսին ռուս-թուրքական հարաբերություններում գերակայող էին կայունացման միտումները: Առեւտրատնտեսական հարաբերությունների բուռն զարգացումը, որը արձանագրվել էր դեռևս նախորդ տարիներին, սկսեց վերածվել աշխարհառաջնավարական գործոնի եւ կատարել այս հարթությունում կայունացնող դեր: Այս ոլորտում ի հայտ էին եկել մի շարք նոր երեւույթներ, ինչպիսիք էին միլիարդների հասնող «ճամպուրկային առեւտուրը» եւ խոշոր թուրքական ներդրումները Ռուսաստանում, մասնավորապես՝ շինարարական ու սննդի ոլորտներում: Աննախադեպ աճ արձանագրվեց նաեւ երկու երկրների առեւտրային հարաբերությունների այնպիսի «ավանդական» ոլորտում, ինչպիսին էր ռուսական գազի առաքումը Թուրքիա: Կարելոր էր այս առումով «Կապույտ հոսանք» բազմամիլիարդանոց գործարքը, որը նախատեսում էր գազատար կառուցել Սեւ ծովի հատակով եւ այդպիսով ապահովել ռուսական գազի անմիջական առաքումը Թուրքիա, ինչն էլ ավելի էր մեծացնում նրա կախվածությունը ռուսական գազից:

Թուրքական տարածաշրջանային քաղաքականության ռազմավարությունը, պահպանելով հանդերձ իր հակառուսական ուղղվածությունը, կորցրեց նախորդ տարիների ագրեսիվությունը: Երկրի քաղաքական ընտրանու համար ակնհայտ դարձավ պանթուրքիստական գաղափարների վրա հիմնված քաղաքականության ցածր արդյունավետությունը: Չունենալով անհրաժեշտ տնտեսական ներուժ եւ չդիմանալով այլ արտաքին ուժերի հետ մրցակցությանը՝ Թուրքիան ստիպված հրաժարվեց իր հավակնոտ ծրագրերից Կենտրոնական Ասիայում, ինչը մեղմացրեց նրա մրցակցությունը այս տարածաշրջանում Ռուսաստանի հետ:

Չարավային Կովկասում թուրք-ռուսական հակամարտության հիմնական թատերաբեմն էր կասպյան նավթի արտահանման ուղիների խնդիրը: Միաժամանակ Թուրքիան փորձում էր հակակշռել ռուսական ռազմական ներկայությունը Չայաստանում՝ ծավալելով ռազմական համագործակցություն Վրաստանի հետ: Իր հերթին Ռուսաստանը, փորձելով հակակշռել Թուրքիայի ներգրավվածությունը չեչենական հակամարտությունում, սկսեց օգտագործել քրդական գործոնը՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով: Սակայն բոլոր այդ գործընթացները էապես չէին ներազդում դեռևս 1990-ականների կեսերին Չարավային Կովկասում հաստատված ուժերի հաշվեկշռի վրա:

Աշխարհառաջնավարական նոր գործընթացներ

2001թ. աշունը – 2002թ. գարունը շրջադարձային էին եւ տարածաշրջանի, եւ թուրք-ռուսական հարաբերությունների համար: Այդ շրջանում,

որպես արձագանք ԱՄՆ-ի դեմ 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչական հարվածի, սկիզբ առան աշխարհառազմավարական բնույթի երկու գործընթացներ, որոնք շարունակվում են ցայսօր:

Դրանցից առաջինի սկիզբը ստացավ դիվանագիտական փաստաթղթի ձեւակերպում, սակայն մնաց աննկատ նույնիսկ շատ մասնագետների համար: Այդ փաստաթուղթը 2001թ. նոյեմբերին Նյու Յորքում Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ ստորագրված «Եվրասիայում համագործակցության մասին» համաձայնագիրն էր, որով նախատեսվում էր երկու երկրների արտգործնախարարությունների միջեւ անցկացնել պարբերական քննարկումներ եւ կարգավորել ու համադրել տարածաշրջանային քաղաքականության խնդիրները: Դրանով եվրասիական երկու հզոր տերությունները արձագանքեցին համաաշխարհային միակ գերտերության՝ ԱՄՆ դեռեւս սաղմնային տեսքով արտահայտած նկրտումներին՝ իսլամական ահաբեկչության դեմ պայքարի քողի ներքո ընդլայնել իր ազդեցության ոլորտները եվրասիական տարածաշրջանում:

Ամերիկյան վերոնշյալ նկրտումները Չարավային Կովկասի տարածաշրջանում իրականություն դարձան 2002թ. գարնան ամիսներին, երբ ամերիկյան ռազմական խորհրդատուները ժամանեցին Վրաստան: Ռուսաստանի հակազդեցությունը դրան խիստ բացասական էր եւ աղմկալից: Թուրքիայի դիրքորոշումը նույնպես բացասական էր, սակայն ոչ այնքան հստակ արտահայտված, ինչպես Ռուսաստանինը: Ըստ էության, ամերիկացիները նախընտրեցին չօգտվել թուրքերի աջակցությունից եւ որոշեցին ապահովել իրենց անմիջական ռազմական ներկայությունը, թեպետ եւ խորհրդանշական ձեւով: Այսպիսով՝ սկիզբ դրվեց ԱՄՆ նոր ռազմավարությանը մեր տարածաշրջանում, որի նպատակն է արագացված տեմպերով իր օգտին փոխել վերջին տարիներին հաստատված ուժերի հաշվեկշիռը: Վրաստանում «վարդերի հեղափոխությունը» հաստատում է այդ բնութագիրը:

Այս նոր իրադրության պայմաններում էր, որ տեղի ունեցան Թուրքիայի ու Ռուսաստանի ղեկավարների վերոնշյալ փոխադարձ այցերը, որոնք ընկալվեցին որպես ռուս-թուրքական մերձեցման վկայություն: Իրականում, աշխարհառազմավարական տեսանկյունից, տեղի է ունենում այլ բնույթի գործընթաց. տարածաշրջանային երկու հզոր տերությունները, անցյալի եւ այսօրվա աշխարհառազմավարական հակառակորդները, ձգտում են փոխհամաձայնությամբ մեղմել կամ նույնիսկ վերացնել իրենց մրցակցությունը՝ տարածաշրջանում աննախադեպ ակտիվություն ցուցաբերող երրորդ ուժի՝ ԱՄՆ միանձնյա գործողությունների դեմ-հանդիման: Ըստ էության, Ռուսաստանը եւ Թուրքիան փորձում են պահպանել տարածաշրջանում status quo-ն, իսկ ԱՄՆ-ը՝ խախտել այն:

Այդ նոր իրավիճակը ենթադրում է երկկողմանի հարաբերությունների նոր որակ, որի համար գտնվել եւ պաշտոնական փաստաթղթերում ամրագրվել է համապատասխան դիվանագիտական արտահայտությունը՝ «բազմակողմանի համագործակցություն»: Մեր կարծիքով, աշխարհաքաղաքական վերլուծության շրջանակներում ավելի ճիշտ կլիներ բնութագրել ռուս-թուրքական հարաբերությունների ներկա փուլը որպես «աշխարհառազմավարական զինադադար»: Իրենց բանավոր ելույթներում թուրք եւ ռուս պաշտոնյաները նշում են, որ այս նոր իրողությունը միջանկյալ հանգրվան է՝ դեպի «ռազմավարական համագործակցություն» տանող ճանապարհին: Կարելի է եզրակացնել, որ կողմերը հակված են միտումնավոր տպավորություն ստեղծել, թե իրենք հարթել են բոլոր հակասությունները: Սակայն դա այդպես չէ: Այսպես, օրինակ, չնայած փորձեր են արվել փոխհամաձայնության հասնել չեչենական ու քրդական հարցերում (ռուսները փոխանցել են թուրքերին հետախուզական տվյալներ Թուրքիայում գործող չեչեն ահաբեկիչների մասին՝ նրանց դեմ միջոցներ ձեռնարկելու ակնկալիքով, իսկ թուրքերը պահանջել են, որ Քուրդիստանի բանվորական կուսակցության գործունեությունը Ռուսաստանում արգելվի եւ այլն), սակայն դրական արդյունքներ դեռեւս չեն արձանագրվել:

Որպես հարաբերությունների սերտացման գաղափարական հիմնավորում շրջանառվում են եվրասիականության ու «ռազմավարական խորքի» հայեցակարգերը: Առաջինի ջատագովն է հայտնի աշխարհաքաղաքագետ Ա. Դուգինը, որը վերջերս հաճախակի է լինում Թուրքիայում, իսկ երկրորդի հեղինակն է վարչապետ Էրդողանի խորհրդական Ա. Դավութօղլուն:

Եզրահանգում

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին Չարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրադրությունը թեւակոխում է հետխորհրդային դարաշրջանի երկրորդ փուլ, որը բնութագրվում է վերը նշված աշխարհաքաղաքական վերադասավորումներով: Նոր երեւույթներ են հանդես գալիս նաեւ ռուս-թուրքական հարաբերություններում: Դրանց հիմնական իմաստն է՝ Չարավային Կովկասում երկու պետությունների միջեւ գոյություն ունեցող ուժերի հաշվեկշռի պահպանումը: Իսկ դա նշանակում է, որ երկուսն էլ ձգտելու են պահել այն, ինչ արդեն ունեն: Ռուսաստանի պարագայում դա նրա ռազմական ներկայությունն է Չայաստանում եւ փաստորեն այդպիսով՝ Չարավային Կովկասում: Իսկ դա, իր հերթին, նշանակում է, որ նա չի գնա զիջումների թուրքական կողմին, օրինակ՝ Ղարաբաղյան հիմնահարցում, եւ չի վտանգի իր դաշնակցային հարաբերությունները Չայաստանի հետ: Համեմայնդեպս, Թուրքիայի հետ «աշխարհառազմավարական զինադադարի» ներկա փուլում:

ԱՄՆ–ԻՐԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ **Գազիկ Տեր-Հարությունյան**

Այսօր վերլուծաբանական հանրությունը գրեթե չի կասկածում, որ 2005-ի քաղաքական գործընթացներում առանցքային դեր են կատարելու ԱՄՆ ծրագրերը Իրանի նկատմամբ: Ակնհայտ է, որ զարգացումները ԱՄՆ–Իրան հարթությունում անխուսափելիորեն շոշափելու են նաեւ մեր երկրի շահերը, եւ այդ համատեքստում՝ խնդիրը շարունակական լուսաբանման կարիք ունի:

Հիշենք, որ դեռ 2002թ. Իրանը, Իրաքի եւ Հյուսիսային Կորեայի հետ միասին, ԱՄՆ կողմից որակավորվեց որպես «չարի առանցք»-ի երկիր: Իր հերթին՝ Իրաքի օրինակը ցուցադրեց, որ ԱՄՆ-ն իր «հակահարձակական» ռազմավարությունն իրականացնում է խիստ հետեւողականորեն: Ժամանակին որոշ վերլուծաբաններ հակված էին կարծելու, թե Իրանի դեմ ռազմական գործողությունները պետք է սկսվեին 2003թ., Իրաքի օկուպացիայից անմիջապես հետո: Նման կարծիքը տրամաբանական էր, քանի որ դրա մասին էին վկայում տեղեկատվական դաշտում հայտնված բազմաթիվ նյութերը: Սակայն Իրաքում ԱՄՆ զինուժի դեմ կատարվող շարունակական գործողությունները, ստեղծված քաոսային վիճակը, ինչպես նաեւ ԱՄՆ նախագահական ընտրությունների հեռանկարը, թերեւս, պատճառ հանդիսացան, որպեսզի Իրանի նկատմամբ ակտիվ գործողությունների պլանները առժամանակ սառեցվեն:

Սակայն այսօր, երբ Իրաքում իշխանությունը գոնե ձեւականորեն հանձնվել է տեղացիներին եւ նրանք են պաշտոնապես պատասխանատվություն կրում երկրում տիրող իրավիճակի համար, իսկ Ջորջ Բուշն ունի եւս 4 տարի նախագահելու մանդատ, Իրանին «հնազանդեցնելու» խնդիրը նախկինի պես դարձել է հրատապ: Տարվա սկզբին ամերիկյան պաշտոնական անձանց, առաջին հերթին՝ նախագահ Բուշի եւ Պետդեպարտամենտի քարտուղար Բ. Ռայսի՝ Իրանին ուղղված խիստ հայտարարությունները ցրեցին այն բոլոր կարծիքները, թե Իրանի «հարցը» գուցե եւ առայժմ դուրս է եկել ԱՄՆ քաղաքականության օրակարգից:

Աշխարհագաղափարախոսական գործոնը

Հայտնի է, որ ներկայիս ամերիկյան գլոբալ եւ մասնավորապես՝ մերձավորարեւելյան քաղաքականությունը հիմնված է մի շարք աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական հիմնարար պատկերացումների

վրա: Միեւնույն ժամանակ անհնարին է վարել նման նպատակասլաց քաղաքականություն՝ առանց ունենալու գաղափարախոսական հիմնադրույթներ: Կարելի է ասել, որ ԱՄՆ-ը, որպես դասական կայսրություն, փորձ է կատարում սեփական արժեքային համակարգի դրույթները ներմուծել այլ երկրներ եւ դարձնել դրանք գերակայող մնացյալ աշխարհի համար: Աշխարհագաղափարախոսական գործոնը որոշիչ դերակատարում ունի նաեւ ԱՄՆ-Իրան հարաբերություններում: Այսօր թեոկրատիկ պետական կառուցվածք ունեցող Իրանը մահմեդական-արեւելյան աշխարհի արժեքների հիմնական կրողներից է: ԱՄՆ-ը, իր հերթին, կամավոր ստանձնել է քրիստոնեական-արեւմտյան արժեքների կրողի եւ տարածողի դերը: Հատկանշական է, որ նախագահ Ջորջ Բուշը իր հրապարակային ելույթներում հաճախ է դիմում նախախնամությանը եւ օգտագործում աստվածաբանական եզրաբանություն: Դա հիմք է տալիս մի շարք քաղաքական մեկնաբանների որակել ԱՄՆ-ը՝ որպես դեպի թեոկրատիա միտվող մի տերություն:

Ամերիկյան որոշ քաղաքագետներ, որոնց թվում հատկապես առանձնանում են Բեռնարդ Լյուիսը եւ Սամուել Հանտինգտոնը, համոզված են, որ մահմեդական քաղաքակրթությունը բացասական իմաստով խիստ պահպանողական է, իսկ իսլամի դրույթները վտանգ են պարունակում քրիստոնյա քաղաքակրթության եւ հատկապես ԱՄՆ-ի համար: Այդ թեզերում արտահայտված մտքերի համատեքստում, թերեւս, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նույն Իրանի պաշտոնական անձինք հաճախ են հանդես գալիս քաղաքակրթությունների միջեւ երկխոսության անհրաժեշտության, այլ ոչ հակամարտության դիրքերից:

Այսօր ԱՄՆ-ում եւ արեւմտյան այլ երկրներում իրականացվում են ծավալուն տեսական մշակումներ, որոնց նպատակն է նպաստել իսլամի որոշ դոգմաների բարեփոխմանը, որով՝ այդ դավանանքը դարձնել ավելի «նարդկային» եւ ոչ «ծայրահեղական»: Նման մշակումները պարբերաբար քննարկվում են միջազգային գիտաժողովներում, եւ փորձ է կատարվում տեղեկատվական եւ քաղաքական տեխնոլոգիաների միջոցներով դրանք աստիճանաբար ներդնել առանձին (մասնավորապես՝ եվրոպական եւ ամերիկյան ազդեցության տակ գտնվող երկրների) մահմեդական համայնքներում:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Իրանի «խնդիրը» առաջին հերթին ունի գաղափարախոսական նշանակություն, եւ ԱՄՆ հիմնական նպատակը Իրանը աշխարհիկ եւ արեւմտյան արժեքներ դավանող երկրի վերածելն է: Նկատենք, որ նման հարցադրումն է, որ ստեղծված իրավիճակում խիստ դժվարացնում է ԱՄՆ-ի եւ Իրանի (չնայած վերջինս կարծես թե պատրաստ է դրան) փոխհամաձայնությունների գալու հարցը:

Ավելացնենք, որ իր ծրագրերն իրագործելու համար ԱՄՆ-ը փորձելու է, առաջին հերթին, օգտագործել Իրանում ազգամիջյան սուր խնդիրների առկայությունը: Օրինակ, ինչպես եւ Իրաքի պարագայում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Իրանում բնակվող քրդերի գործոնին: Վերջիններիս թիվը բավական պատկառելի է՝ մոտ 5 միլիոն: Ինչպես հայտնի է, քրդերը ապրում են ազգային ինքնագիտակցման շրջան: Այս առումով Իրաքի քրդերի օրինակը, որոնք արդեն իսկ ձեռք են բերել փաստացի ինքնավարության կարգավիճակ, կարող է եւ խիստ վարակիչ լինել Իրանում բնակվող քրդերի համար: Ակնհայտ է նաեւ, որ Իրաքյան քրդերի հաջողությունները կապվում են այդ երկրում ամերիկյան զորքերի ներկայության հետ: Խնդրի առարկա կարող են լինել նաեւ Իրանում բնակվող ադրբեջանցիները, որոնք թիվը, համաձայն տարբեր գնահատականների, կազմում է 20-25 մլն:

ԱՄՆ կողմից Իրանում վարչակարգի փոփոխման գործոն է դիտարկվում նաեւ այդ երկրում, հիմնականում՝ ուսանողական շրջաններում նկատվող ձգտումը դեպի ազատական գաղափարները: Այդ առումով հատկանշական է Ք.Ռայսի այն հայտարարությունը, թե Իրանը պետք է հետեւի Ուկրաինայի օրինակին:

Ազգամիջյան տարածայնությունների սաստկացման եւ հեղափոխական տրամադրությունների բարձրացման նպատակով ԱՄՆ-ը լայնորեն օգտագործում է տեղեկատվական-հոգեբանական ճնշման իր հզոր միջոցները: Սակայն ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ առայժմ Իրանը, նրա իշխանական եւ հատուկ նշանակության կառույցները կարողանում են համարժեք պատասխանել մարտահրավերներին: Այս հանգամանքը, իր հերթին, կարող է դրդել ԱՄՆ-ին, որպես ծայրագույն միջոց, փորձել լուծել խնդիրը ուժային-ռազմական եղանակով: Նման քայլի պատրվակ կարող է հանդիսանալ այն մեղադրանքը, թե Իրանի միջուկային ծրագիրն ունի նաեւ ռազմական բաղադրիչ, եւ այդպիսով այդ երկիրը անմիջական վտանգ է ներկայացնում ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների համար:

Ռազմական տարբերակ

Ուժային տարբերակի դեպքում ենթադրվում է, որ ԱՄՆ-ը կարող է կիրառել երկու տիպի ռազմավարական մոտեցում.

1. Նախապես կայունացնել իրավիճակը Իրաքում եւ հետո նոր սկսել ռազմական գործողություններ Իրանում, իսկ հետո (գուցե եւ առաջ) նաեւ այլ երկրներում, օրինակ՝ Սիրիայում:

2. Որպես հիմք ընդունել այն իրողությունը, որ իրադրությունը Իրաքում անհնարին է շտկել առանց Իրանին, Սիրիային, Սաուդյան Արաբիա-

յին եւ եզրափակումը (հատկանշական է, որ վերջին երկուսին արդեն սկսել են մեղադրանքներ ներկայացնել միջուկային զենք ստեղծելու կամ ձեռք բերելու ուղղությամբ աշխատանքներ վարելու մեջ) հնազանդեցնելու, հետեւաբար հարկ է սկսել հատուկ կամ ռազմական գործողություններ վերոհիշյալ երկրների դեմ:

Այս կամ այն տարբերակի իրագործման հավանականությունը դժվար է գնահատել՝ հաշվի առնելով տարածաշրջանում արագ փոփոխվող ռազմաքաղաքական իրավիճակը: Առայժմ զարգացումները խոսում են ավելի շուտ 2-րդ տարբերակի օգտին: Ըստ ամենայնի, առանց ողջ տարածաշրջանի վրա վերահսկողություն սահմանելու ներկայիս իրավիճակը Իրաքում դժվար թե բարելավվի: Դրա մասին են վկայում ԿՀՎ եւ ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի վերջին զեկույցները:

Սակայն թվում է, թե Իրանի դեմ ռազմական գործողություններ ծրագրելիս ԱՄՆ-ը պետք է որ հաշվի առնի Իրաքում ձեռք բերած բացասական փորձը: Դա, առաջին հերթին, կայանալու է նրանում, որ ԱՄՆ-ը փորձելու է խուսափել Իրանի տարածքի համապարփակ օկուպացիայից (ինչը ներկայումս առկա է Իրաքում): Դա անցանկալի է, մասնավորապես, այն պատճառով, որ Իրաքում ԱՄՆ զինուժը փաստորեն կատարում է իրեն ոչ բնորոշ ոստիկանական ֆունկցիաներ: Բացի նրանից, որ նման մոտեցումը ցուցաբերեց իր անարդյունավետությունը, պետք է հաշվի առնել, որ Իրանի տարածքը մոտ երեք անգամ գերազանցում է Իրաքի տարածքին: Այսինքն՝ ենթադրվող վերահսկողություն սահմանելու համար ԱՄՆ-ը պետք է ապահովի զինուժի համապատասխան մարդկային ռեսուրսներ:

Դեռ 2004թ. աշնանը ամերիկյան մի հեղինակավոր ամսագրում հայտնվեց տեղեկատվություն, թե ԱՄՆ հարձակումը Իրանի վրա ընդունելու է ճշգրիտ ավիացիոն եւ հրթիռային հարվածների տեսք: Նշվում է, որ այդ հարվածները զուգորդվելու են հատուկ նշանակության զորամասերի գործողությունների հետ, ինչը թույլ է տալու ոչնչացնել Իրանի ռազմական եւ միջուկային ենթակառուցվածքները եւ դյուրին կերպով իրագործել վարչակարգի փոփոխություն: Հատկանշական է, որ համաձայն այդ տեղեկատվության, ԱՄՆ զինուժը լայնածավալ ռազմական գործողությունների չի դիմելու:

Հարկ է նշել, որ, իր հերթին, Իրանը ԱՄՆ-ի դեմ բազմապլան եւ արդյունավետ քաղաքականություն է վարում: Կարելի ասել, որ առայժմ Թեհրանին հաջողվում է չեզոքացնել ԱՄՆ նախաձեռնությունները: Նշենք այդ քաղաքականության հիմնական բաղադրիչները.

❖ Ռազմավարության հարթությունում, որպես հակակշիռ ԱՄՆ-ին, Իրանը ակտիվ տնտեսական, քաղաքական եւ ռազմական հարաբերություններ է հաստատել Չինաստանի (որն այսօր հանդիսանում է Իրանի

ամենախոշոր առեւտրական գործընկերը), ԵՄ եւ Ռուսաստանի հետ: Չայտնի է, որ վերոհիշյալ տերությունները դիվանագիտական եւ այլ բնույթի համաձայնեցված ջանքեր են գործադրում՝ Իրանի դեմ ԱՄՆ հարձակունը կանխելու ուղղությամբ:

❖ Իրանի ազդեցության տակ գտնվող իրաքյան շիաները ակտիվորեն մասնակցեցին Իրաքի պառլամենտական ընտրություններին: Չաշվի առնելով, որ սուլենիների մի զգալի մասը բոյկոտեց ընտրությունները եւ այն, որ քրդերի հիմնական խնդիրը սեփական անկախություն ստանալն է, շիաները Իրաքում օրենսդիր իշխանության մի զգալի մասը կվերցնեն իրենց ձեռքը: Չաշվի առնելով Իրանի ավանդական ազդեցությունը Իրաքի բնակչության այդ հատվածի վրա՝ ստեղծված իրավիճակը հնարավորություն կտա Իրանին ինչ-որ չափով վերահսկել իրաքյան գործընթացները եւ այդպիսով անուղղակիորեն խոչընդոտել ԱՄՆ ծրագրերին հենց Իրաքից:

❖ Իրանը ակտիվորեն է նախապատրաստվում ԱՄՆ-ի հետ հնարավոր ռազմական գործողություններին՝ արդարացիորեն համարելով, որ իրաքյան Ֆալուջա քաղաքի ճակատամարտը ԱՄՆ-Իրան հակամարտության ռազմական առաջին բախումն էր: Վերջին ժամանակահատվածում Իրանը Իրաքի հետ ունեցած սահմանի երկայնքով անցկացրեց աննախադեպ մասշտաբի զորավարժություններ: Այդ միջոցառմանը մասնակցում են ավելի քան 10 դիվիզիա, տանկային միավորներ եւ ավիացիա:

❖ Իրանը ակտիվորեն աշխատում է միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ, համաձայն որոշ աղբյուրների արդեն իսկ ունի այդ զենքի սահմանափակ պաշարներ: Ինչպես վերջերս հայտարարեց Իրանի անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Չասան Ռոհանին, ամերիկյան կամ իսրայելական հարձակման պարագայում իր երկիրը դրանց դեմ կիրառելու է համարժեք քայլեր, ինչն անուղղակիորեն հաստատում է, որ բացառված չէ, որ Իրանն իրոք տիրապետում է ռազմական միջուկային տեխնոլոգիաների:

Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ պատերազմական գործողությունների ծավալումը կարող է որակապես փոխել տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը եւ հղի է անկանխատեսելի հետեւանքներով: Մնում է հուսալ, որ զարգացման նման սցենարը կմնա որպես տեսական դիտարկում:

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ Արսեն Հակոբյան

*Հյուսիսային Կովկասի էթնիկ խայտաբղետությունն ավելի բազմե-
րանգ դրսևորումներ է ստանում, երբ դրան ավելանում է դավանական
գործոնը: Հյուսիսային Կովկասում երկու համաշխարհային կրոնների՝
իսլամի եւ քրիստոնեության տարածվածության, ազդեցության, ընկալում-
ների եւ գործառնության խնդիրը, այնուամենայնիվ, դուրս է գալիս կարծ-
րատիպային դարձած «քրիստոնյա» եւ «մահմեդական» պատկերացում-
ներից եւ ունի բավական ինքնատիպ ու հետաքրքիր դրսևորումներ:*

*Այս առումով չափազանց կարեւոր է դավանական գործոնի պար-
զաբանման խնդիրը Հյուսիսային Կովկասի ժողովուրդների պատմական
զարգացումների ընթացքում՝ հասկանալու համար ներկայիս գործընթաց-
ների որոշ օրինաչափություններ:*

Ըստ պաշտոնական վիճակագրության, Հյուսիսային Կովկասում
բնակվող ժողովուրդները դավանական առումով հետեւյալ նկարագիրն
ունեն: Մահմեդական սուննիներ են դաղստանյան ժողովուրդները, չեչեն-
ները, ինգուշները, ադղները, կաբարդինները, չերքեզները, նոդայները,
կարաչայները, բալկարները, աբխազների մի հատվածը եւ օսերի փոքր
մասը: Ուղղափառ քրիստոնյաներ են օսերի գերակշիռ մասը եւ աբխազ-
ների մոտ կեսը:

Կովկասյան ժողովուրդները քրիստոնեությանն ու իսլամին առնչվել
են դեռեւս միջին դարերից սկսած: IV դարում, երբ քրիստոնեությունը Հա-
յաստանում դարձավ պետական կրոն, այնուհետեւ տարածվեց Վրաստա-
նում եւ Աղվանքում, քրիստոնյա առաջին քարոզիչները սկսեցին հայտնվել
կովկասյան լեռնականների շրջանում: Վաղ միջնադարում, ըստ էության,
թե՛ դավանաբանորեն, թե՛ վարչականորեն Այսրկովկասի երկրները մեկ
եկեղեցի էին կազմում, որում գերակա դիրք էր զբաղեցնում հայոց եկեղե-
ցին: Նկատենք, որ այս շրջանում այսրկովկասյան երկրների բոլոր եկեղե-
ցիներում ժամասացության լեզուն հայերենն էր: Այսրկովկասյան դավա-
նական միասնության այս իրավիճակը պահպանվեց մինչեւ 6-7-րդ դդ.,
երբ վրաց եկեղեցին որդեգրեց քաղկեդոնիկ ուսմունքը՝ ի տարբերություն
հայոց եւ աղվանից եկեղեցիների:

Հյուսիսկովկասյան ժողովուրդների շրջանում քրիստոնեական քա-
րոզչության առաջին վկայությունները վերաբերում են հարավային

Դադստանին, հյուսիսարեւելյան Այսրկովկասին, որտեղ «Մազքթաց երկրուն» քրիստոնեությունը քարոզելիս նահատակվում է Գրիգոր Լուսավորչի թոռ, Աղվանից կաթողիկոս Գրիգորիսը: Նա տանջամահ է արվում մազքութների Սանեսան թագավորի հրամանով՝ կապվելով ձիուն: Գրիգորիսի նահատակության վայրում, հարավային Դադստանում հետագայում սրբավայր է կառուցվում, եւ այդ եկեղեցին մինչեւ 1980-ական թթ. կանգուն էր: Ուշագրավ է, որ 19-րդ դ. վերջերին նույնիսկ տեղի մահմեդականների մոտ տարածված էր Գրիգորիսի նահատակության ավանդությունը, եւ շատերը այդ սրբավայր ուխտի էին գալիս:

Ակնհայտ է, որ Գրիգորիսի գործունեությունը հարավային Դադստանում հայոց կրոնամշակութային առաքելության մի դրվագն է միայն, եւ տարածաշրջանի հետ հայության կապերը վաղ միջնադարում բավական սերտ էին: Ավելորդ է հիշել, որ ներկայիս Դադստանի հարավում բնակվող խմբերն ու ժողովուրդները վաղմիջնադարյան Կովկասյան Աղվանքի հիմնական բնակչության հետնորդներն են հանդիսանում եւ այդ ժամանակաշրջանում ընդգրկված էին Աղվանից եկեղեցու ոլորտը: Շատ խմբերի մոտ նույնիսկ 19-20-րդ դդ. պահպանվել էին հիշողություններ իրենց քրիստոնեական անցյալի մասին:

Վաղ միջնադարում քրիստոնեության մշակութային ազդեցության ուշագրավ եւ հետաքրքիր դրսևորումներից է նաեւ Կովկասյան Աղվանքում Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը. նույնիսկ խոսվում է այն մասին, որ նա անցել է Դադստան եւ գրեր ստեղծել թյուրքալեզու հոների համար՝ իր գործունեությունը զուգակցելով քրիստոնեության քարոզչությանը: Համենայնդեպս, օտար աղբյուրները խոսում են հայ քահանաների արդյունավետ գործունեության մասին Հոնաց աշխարհում:

Եթե Կովկասի արեւելքում կրոնական եւ մշակութային գործունեությունն իրականացնում էին հայոց եւ աղվանից եկեղեցիները, ապա արեւմուտքն ու հյուսիսը քրիստոնեական այլ երկրների՝ Վրաստանի եւ Բյուզանդիայի ոլորտն էին, որոնց գործունեության արդյունքում վայնախյան, ալանական, աբխազա-ադղական խմբերի մոտ նույնպես սկսեց տարածվել քրիստոնեությունը:

Այնուամենայնիվ, ըստ էության, կովկասյան լեռնականների մոտ նոր ուսմունքի կրողն էին դառնում հիմնականում էլիտար խմբերը՝ քաղաքական նկատառումներից ելնելով, իսկ բնակչության գերակշիռ հատվածը շարունակում էր հավատարիմ մնալ իր սեփական հավատալիքներին:

Հետագայում, Ռուսաստանի կողմից Կովկասի նվաճման պայմաններում, քրիստոնեության դիրքերը քիչ թե շատ ամրապնդվեցին, սակայն դա ընդհանուր պատկերը չփոխեց՝ հասարակական հարաբերություններում

եւ ավանդական մշակույթում ժողովրդական հավատալիքների գործառույթյան առումով:

Այսօր էլ թե՛ քրիստոնյա, թե՛ մահմեդական օսերի ու արխագների մոտ պաշտոնական այդ կրոնները հանդես են գալիս ժողովրդական հավատալիքների հզոր եւ պահպանված դրսեւորումներով: Այս միտումներն ավելի են ակտիվացել վերջին տասնամյակներում, երբ այդ ժողովուրդները էթնիկ զարթոնքի պոռթկումներ ունեցան, որն ուղեկցվում է նաեւ «դարձով»՝ դեպի ժողովրդական, տեղական սրբերը, սրբավայրերն ու հավատալիքները:

Օրինակ՝ Յյուսիսային Օսիայում վերածնվել եւ մեծ շուքով նշվում է ամառային տոներից մեկը, որի ժամանակ ողջ հանրապետությունը, այդ թվում նաեւ ղեկավարությունը ուխտի են գալիս տեղական սրբերից մեկին նվիրված «սրբազան պուրակ», ուր հասարակական խնջույքներ են կազմակերպվում: Ուշագրավ է, որ այն մեծ շուքով եւ կազմակերպված սկսել է նշվել 1990-ական թթ. հարավօսական դեպքերից հետո, եւ այդ գործում նկատելի դերակատարում են ունեցել նաեւ հանրապետության իշխանությունները:

1990-ական թթ. վերջերի հետազոտություններն Աբխազիայում ցույց են տալիս, որ մահմեդական եւ քրիստոնյա արխագների մոտ վերածնունդ է ապրում ավանդական հավատալիքային համակարգը, որը պատերազմի բովով անցած հասարակության համար լուրջ գաղափարական հենարան է հանդիսանում: Այստեղ նույնիսկ աշխատանքներ են տարվում արխագական ավանդական պատվո վարքականոնը «ապսուարան» («արխագականություն») ուղղափառության հետ համադրելու ուղղությամբ:

* * *

Մահմեդականության հետ Յյուսիսային Կովկասի ժողովուրդների առաջին շփումները տեղի են ունեցել դեռեւս 7-րդ դ. սկսած, երբ արաբները գրավեցին ողջ Այսրկովկասը: Չնայած տարածաշրջանում արաբական բազմադարյա գերիշխանությանը՝ իսլամի տարածումը նրանց օրոք լայն չափեր չընդունեց, եւ այս ժամանակաշրջանում Այսրկովկասում իսլամական մշակույթի կենտրոններ էին հանդիսանում հիմնականում քաղաքները: Դրանցից կարելուր նշանակություն ստացավ Դերբենտը, որը դարձավ հարավային Դաղստանում մահմեդականության «ֆորպոստը»: Ուշագրավ է, որ քաղաքի ամենամեծ Ջումա մզկիթը նախկինում եկեղեցի է եղել եւ միայն արաբների օրոք է վերածվել մահմեդական հաստատության:

Արեւելյան Կովկասում, դաղստանյան ժողովուրդների շրջանում մահմեդականացման գործընթացները բավական երկար տեւեցին՝ հասնելով

մինչև 15-17-րդ դդ.: Նույնը կատարվեց նաև Արեւմտյան եւ Կենտրոնական Կովկասի շրջանում բնակվող ժողովուրդների մոտ: Միայն 16-17-րդ դարերում, կապված Օսմանյան Թուրքիայի ակտիվ քաղաքականության հետ, Արեւմտյան եւ Կենտրոնական Կովկասում իսլամը տարածում ստացավ:

Հյուսիսային Կովկասում իսլամի տարածվածության խնդիրն ունի իր առանձնահատկությունները: Մասնավորապես դրա տարածման, ազդեցության գործոնը բավական ուժեղ է Դաղստանում, իսկ դեպի արեւմուտք ընթանալով՝ նրա դիրքերը գնալով թուլանում են, եւ Արեւմտյան Կովկասում բնակվող մահմեդական աբխազները, ադղները, չերքեզները, կաբարդինները, հավատարմորեն պահպանելով իրենց ավանդական հավատալիքներն, ըստ էության, անվանապես են միայն մահմեդականներ:

Մահմեդականության մյուս առանձնահատկությունը Հյուսիսային Կովկասում վերաբերում է «ավանդական» եւ «մաքուր» իսլամի խնդիրներին:

Պատմամշակութային բազում գործոններով պայմանավորված՝ Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մոտ ձեւավորվել եւ գործում է «ավանդական» իսլամը, ինչը նշանակում է, որ հասարակական հարաբերություններն ու կենցաղը կարգավորվում են ոչ թե շարիաթի կամ մահմեդական իրավունքի նորմերով, այլ դարերով ձեւավորված սովորության իրավունքով: Այս համակարգը առաջին լուրջ փորձություններին ենթարկվեց, երբ Չեչնիայում եւ Դաղստանում 18-րդ դ. վերջից սկսած մինչև 19-րդ դ. կեսերը բռնկվեցին կրոնական երանգավորմամբ ապստամբություններ ընդդեմ Ռուսաստանի: Այս ամենն իր զագաթնակետին հասավ Իմամ Շամիլի օրոք, երբ Չեչնիայում եւ Դաղստանում ձեւավորվեց աստվածապետական կարգ ունեցող պետական կազմավորում՝ իմամաթ: Այս գործընթացներն ընթանում էին «մաքուր» իսլամի տարածման, շարիաթի նորմերը տեղական ժողովուրդների հասարակական հարաբերություններում ամրապնդելու եւ դրանց գործառնությունն ապահովելու ճանապարհով:

Ռուսական կայսրության, այնուհետեւ՝ ԽՍՀՄ օրոք «մաքուր» իսլամն, ըստ էության, դուրս մղվեց: Դավանական գործընթացները հետաքրքիր դրսեւորումներ ստացան ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ էթնիկ ակտիվության հետ մեկտեղ նոր իմաստավորում եւ դերակատարում սկսեց ունենալ կրոնական գործոնը:

Իսլամի երկու ուղղությունները, որոնք պատմականորեն ձեւավորվել էին Հյուսիսային Կովկասում, սկսեցին նոր երեւակումներ ունենալ: Ավանդական իսլամը, որը Դաղստանում եւ Չեչնիայում ներկայացնում էր սուֆիական ուղղությունը, օգտվում էր պետական աջակցությունից (օրինակ՝ այդ ուղղությունն են ներկայացնում 1989թ. լուծարված Կովկասի մահ-

մեղականների հոգեւոր վարչության տեղական կազմակերպությունները):

Մյուս ուղղությունը «մաքուր» իսլամն է, որը առավելապես հայտնի է վահաբականություն անունով, թեւեւ իրականում այն սալաֆիականությունն է, որը կոչ է անում վերադառնալ իսլամի վաղ շրջանում գործող նորմերին: ԽՍՀՄ փլուզումից հետո այն արմատավորվեց Դադստանում եւ այնուհետեւ տարածվեց Չեչնիայում: 1990-ական թթ. Դադստանի Չաբանմախի եւ Կարանախի բնակավայրերը նույնիսկ հայտարարվեցին առանձին իսլամական համայնքներ՝ ջամմաթներ եւ դուրս բերվեցին իշխանությունների հսկողությունից: Այնուամենայնիվ, ՌԴ իշխանություններին հաջողվեց Դադստանում ճնշել այդ շարժումը, որը հստակ քաղաքական նպատակներ էր հետապնդում եւ տարաբնույթ աջակցություն ստանում դրսից:

Ներկայումս իսլամական «զարթոնքի» հետ կապված գործընթացները Յյուսիսային Կովկասում բավական բարդ են: Փորձագետներից շատերի կարծիքով՝ ԽՍՀՄ փլուզումից սկսած Յյուսիսային Կովկասը «վերախլանացման» շրջափուլ է ապրում, որը պատմական տարբեր գործոնների ազդեցությամբ ընդհատվել էր, եւ այժմ մահմեդական կովկասյան ժողովուրդների մոտ իսլամի ակտիվ տարածումը դրա վկայությունն է:

**ՄԵՐՁՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ
Սարգիս Հարությունյան**

2003թ. իրաքյան պատերազմից հետո Մերձավոր Արևելքում կրկին նկատվում է լարվածության ընդհանուր աճ, որի տրամաբանությունը տա-
նում է status quo-ի հերթական փոփոխությանը:

Հիմնական պատճառները երկուսն են՝ իրաքյան պատերազմը չլուծեց
այն ռազմավարական խնդիրները, որոնք իր առջեւ դրել էր Միացյալ Նա-
հանգները (աշխարհաքաղաքական բացարձակ առավելություն Մերձա-
վոր Արևելքում, որից էլ հետևում են ազդեցության մեծացումը եվրասիա-
կան գործերում եւ ուղղակի կամ միջնորդավորված ձեւով վերահսկողու-
թյան հաստատումը տարածաշրջանի էներգակիրների նկատմամբ): Ավելին՝
պատերազմից հետո Իրաքում, Իրանում, Թուրքիայում, Սաուդյան Արա-
բիայում, Սիրիայում եւ անգամ Եգիպտոսում ու Իսրայելում ստեղծված
իրավիճակը կամ այդ երկրների վերնախավերում ընթացող հաշվարկներն
ու նրանցից բխող գործողությունները, փաստորեն, օբյեկտիվորեն
ուղղված են Վաշինգտոնի կողմից առաջ քաշվող մերձավորարեւելյան նոր
կարգի դեմ:

Հետևաբար, 2003թ. իրաքյան պատերազմից հետո հաստատված sta-
tus quo-ն ոչ միայն չլուծեց ԱՄՆ վերոհիշյալ ռազմավարական խնդիրները,
այլև՝ իր բնույթով ուղղված է նույն այդ ռազմավարական նպատակների
դեմ. ուստի Վաշինգտոնի տեսանկյունից անհրաժեշտ են *նոր նախաձեռ-
նություններ*:

Հաջորդ կարելուր պատճառը՝ Եվրամիության, Ռուսաստանի, Չինաս-
տանի, Իրանի եւ Սաուդյան Արաբիայի ընդդիմությունն է ամերիկյան ռազ-
մավարությանը, որոնց ձեռնտու չէ մերձավորարեւելյան ստեղծվելիք նոր
կարգը:

Սակայն, ընդհանուր առմամբ, արդեն 2003թ. վերջին պարզ էր, որ
ստեղծված իրավիճակն, առաջին հերթին, ձեռնտու չէ Միացյալ Նահանգ-
ներին: Մյուս կողմից, թերեւս, ստեղծված իրավիճակն անգամ նպաստա-
վոր է Վաշինգտոնի ընդդիմախոսներին, քանզի՝

- ❖ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ը ձեռք չի բերել աշխարհաքաղաքա-
կան բացարձակ առավելություն,
- ❖ իրաքյան նավթի հետ կապված՝ Վաշինգտոնն ունի խնդիրներ,
- ❖ քաղաքական, տեղեկատվական-հոգեբանական, տնտեսական եւ

ռազմական ոլորտներում Միացյալ Նահանգներն անընդհատ կրում է կորուստներ:

Ներկայումս ուրվագծվում են մերձավորարեւելյան «ակտիվացման» մի քանի «առանցքներ», որոնք հանգուցային նշանակություն ունեն ընթացող զարգացումներում:

Իրան

Իրանական գործոնը դարձել է Մերձավոր Արեւելքի քաղաքականության հիմնական հարցը: Ներկայումս Վաշինգտոնը Թեհրանին համարում է իր ռազմավարության իրականացման գլխավոր արգելք: Ընդ որում, Միացյալ Նահանգները գտնում է, որ այդ արգելքի հաղթահարման համար առնվազն հարկավոր է փոխել Թեհրանում առկա վարչակարգը՝ թե՛ աշխարհաքաղաքական խնդիրների շուրջ պայմանավորվածության, թե՛ միջուկային զենք չստեղծելու երաշխիքների առումով:

Մյուս կողմից, վերոհիշյալ հանգամանքից ելնելով, ինչպես նաեւ տարածաշրջանում սեփական ազդեցությունը մեծացնելու նպատակով՝ Իրանը ձգտում է ունենալ միջուկային զենք կամ արդեն իսկ կարող է ունենալ մարտավարական բնույթի միջուկային զենք, որն էլ, իր հերթին, ավելի է խորացնում Վաշինգտոնի անվստահությունը Թեհրանի նկատմամբ:

Ըստ ամենայնի, ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի՝ Եվրոպա եւ Մերձավոր Արեւելք կատարած վերջին ուղեւորության ժամանակ իրանական թեման ամենագլխավորն էր: Հիշեցնենք, որ Ռայսը հայտարարեց, թե Միացյալ Նահանգները չի միանա Եվրոպական եռյակի (Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա)՝ Իրանի հետ տարվող բանակցություններին՝ միաժամանակ քննադատելով այդ բանակցությունները: Մինչ այդ ԱՄՆ Կոնգրեսին հղած իր ամենամյա ուղերձում Միացյալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշ-կրտսերը Իրանը վերստին դասեց ԱՄՆ հիմնական հակառակորդների շարքին:

Ընդհանուր առմամբ, իրավիճակը գնալով լարվում է, եւ այդ համատեքստում հարկ է առանձնացնել հետեւյալը.

❖ ս.թ. փետրվարի 3-ին «Իրանի դիմադրության ազգային խորհուրդ» կազմակերպության Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մոհամադ Մոհադեսինը Փարիզում կայացած մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, թե պաշտոնական Թեհրանն էլ ավելի է մոտեցել միջուկային ռումբի ստեղծմանը՝ արտադրելով կամ արտերկրից ձեռք բերելով պոլոնիում-210 եւ բերիլիում նյութերի անհրաժեշտ քանակություն, ինչը հնարավորություն կընձեռի արտադրել մոտ մեկ տասնյակ միջուկային ռումբեր,

❖ *ս.թ. փետրվարի 6-ին Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի գլխավոր քարտուղար Չասան Ռոհանին հայտարարեց, որ եթե Իրանը հարձակման ենթարկվի, ապա Թեհրանը կարագացնի իր միջուկային ծրագիրը,*

❖ *ս.թ. փետրվարի 9-ին Վաշինգտոնում կայացած մամլո ասուլիսի ժամանակ ԱՄՆ զինուժի Կենտրոնական հրամանատարության ղեկավարի՝ Մերձավոր Արեւելքի, Կենտրոնական Ասիայի եւ Հյուսիսային Աֆրիկայի գծով տեղակալ, գեներալ-լեյտենանտ Լենս Սմիթը հայտարարեց, թե ներկայումս ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը գտնվում է Իրանի նկատմամբ պատերազմի ծրագրերի վերանշակման գործընթացում:*

Ակնհայտ է, որ երկու կողմն էլ խնդիր ունեն առավելագույնս ապահովել միջազգային-քաղաքական աջակցությունը: Ռայսի այցերը Եվրոպա եւ Մերձավոր Արեւելք միտված էին ձեռք բերելու որոշ նախնական պայմանավորվածություններ՝ փետրվարի երկրորդ կեսին Բուշ-կրտսերի Եվրոպա կատարելիք այցից առաջ: Բացառված չէ, որ արդեն այդ այցի ընթացքում Եվրամիության առաջատար երկրների եւ Ռուսաստանի հետ ձեռք բերվեն վերջնական պայմանավորվածություններ:

Իրանական կողմը եւս այդ ուղղությամբ հետաքրքիր քայլեր է ձեռնարկում: Ի հավելումն անցած տարվա հուլիսին թուրք-իրանական հարաբերություններում որոշակի «ճեղքմանը», այս տարի ուշագրավ էին Թեհրանի քայլերը Ադրբեջանի (*ս.թ. հունվարի 24-26-ը կայացավ Իլհամ Ալիևի պաշտոնական այցը Թեհրան. քննարկվող գլխավոր թեմաներն էին՝ Ադրբեջանում ամերիկյան զինուժի հավանական տեղակայումը, Կասպիցի կարգավիճակը եւ Արցախի հարցը*), Աֆղանստանի եւ Հայաստանի ուղղությամբ:

Իրաք

Ըստ էության, Իրաքը շարունակում է հանդիսանալ մերձավորարեւելյան ողջ քաղաքականության կարեւորագույն ցուցիչը, եւ այդ առումով իրավիճակն Իրաքում օրգանապես կապված է իրանական հարցին:

Ինչպես հայտնի է, *ս.թ. հունվարի 30-ին Իրաքում կայացան ընտրություններ՝ 275 տեղանոց Իրաքի խորհրդարանի, 18 նահանգների խորհուրդների եւ Քուրդիստանի (ներառում է Հյուսիսային Իրաքի Սուլեյմանիա, Էրբիլ եւ Դահուք նահանգները) 111 տեղանոց խորհրդարանի համար: Ըստ նախնական տվյալների, Իրաքի խորհրդարանի ընտրություններում այաթոլա Ալի աւ-Սիսթանիի (շիա հոգեւորականություն) հովանավորած «Իրաքի ազգային միացյալ դաշինքը» ստացել է մոտ 140 տեղ: Մեծությամբ երկրորդ խմբավորումը կկազմեն քրդերը. Քուրդիստանի հայրենասիրական միության (ԲՀՄ, նախագահ՝ Ջ.Թալաբանի) եւ Քուրդիս-*

տանի ժողովրդավարական կուսակցության (ՔԺԿ, նախագահ՝ Մ.Բարզանի) ձեռավորած դաշինքը ձեռք է բերել շուրջ 75 տեղ: Իրաքի ներկայիս վարչապետ, շիա Այադ Ալավիի ղեկավարած կուսակցությունը ստացել է 40 տեղ: Ինչ վերաբերում է սուննիներին, ապա Իրաքի ժամանակավոր նախագահ, սուննի Ղազի ալ-Յավարի գլխավորած ցուցակը կունենա ընդամենը 5 տեղ (հիշեցնենք, որ սուննիները, ընդհանուր առմամբ, բոյկոտեցին ընտրությունները): Մնացած 15 տեղերը բաժանվելու են ութ այլ կուսակցությունների միջև, այդ թվում՝ 3 տեղ անցնելու են Մուկթադա աս-Սադրի համախոհներին, 3 տեղ՝ Իրաքի թուրքմեններին:

Քուրդիստանի խորհրդարանում եւ քրդական երեք նահանգներում գերակշիռ մեծամասնությունը, բնականաբար, ձեռք է բերել քրդական վերոհիշյալ կուսակցությունների դաշինքը:

Չարկ է ուշադրություն դարձնել, սակայն, երկու հանգամանքի վրա.

- ❖ Թաամիմ նահանգի, որի կենտրոնը նավթով հարուստ Քիրքուկ քաղաքն է, խորհրդի ընտրություններում ձայների մեծ մասը՝ շուրջ 2/3-րդը (նահանգային խորհրդի 41 տեղերից մոտ 27-ը), ստացել է ԲՅՄ–ՔԺԿ ղեկավարած դաշինքը. նշենք, որ Քիրքուկը հանդիսանում է Յյուսիսային Իրաքի թուրքմենների (մոտ 1 մլն, որոնց պաշտպանում է Թուրքիան), սուննի արաբների եւ քրդերի սուր հակասությունների առարկա,

- ❖ պաշտոնական ընտրություններից զատ, ս.թ. հունվարի 30-ին Քուրդիստանում (քրդական երեք նահանգ) եւ Քիրքուկում ու Խանաքինում «Քուրդիստանի հանրաքվեի շարժում» կազմակերպության կողմից անցկացվեց Քուրդիստանի անկախության ոչ պաշտոնական հանրաքվե, որին, ըստ հրապարակված քվերի, մասնակցել է մոտ երկու միլիոն մարդ, անկախությանը կողմ է քվեարկել մասնակիցների 98.8%-ը:

Չարկ է հիշեցնել, որ 2004թ. մարտին ընդունված Իրաքի անցումային սահմանադրության համաձայն, Իրաքի նոր կառավարությունը կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ նրա օգտին քվեարկի 275 տեղանոց Իրաքի խորհրդարանի պատգամավորների 2/3-րդը: Յետեւաբար, առանց քրդերի կամ Ալավիի ձայների շիաները ինքնուրույն չեն կարող կառավարություն կազմել:

Չուտ ընդհանրական հետեւություններն են.

- ❖ հունվարի 30-ի ընտրությունների միջոցով ԱՄՆ-ը փորձեց հնարավորինս սահմանափակել շիաների (հետեւաբար նաեւ Իրանի) ազդեցությունը Իրաքի քաղաքական համակարգում՝ շեշտը, առաջին հերթին, դնելով քրդերի վրա՝ որպես առավել հուսալի դաշնակիցների,

- ❖ Վաշինգտոնի կողմից քրդական գործոնի խաղարկումը, բացի ներիրաքյան խնդիրներից, միտված է նաեւ Իրանի դեմ. չպետք է մոռանալ, որ Իրանում բնակվում են մոտ 5 մլն քրդեր,

❖ քրդական գործոնն անհանգստացնում է Թուրքիային. Անկարայի մտահոգության առարկա են հանդիսանում Յուսիսային Իրաքում քրդական *de facto* պետականության ամրապնդումը, Քիրքուկ քաղաքի (հետեւաբար նաեւ նավթի) ճակատագիրը, Իրաքում թուրքական ազդեցության հեռանկարի հարցը եւ այդ համատեքստում Յուսիսային Իրաքում բնակվող մոտ 1 մլն թուրքմենների խնդիրը:

Թուրքիա

Ս.թ. հունվարի 26-ին (մինչ իրաքյան ընտրությունները) թուրքական զինված ուժերում երկրորդ մարդը համարվող զեներալ Իլքեր Բաշբուլը հայտարարեց, թե թուրքական բանակը պատրաստվում է ներխուժել Յուսիսային Իրաք, եթե ընտրություններից հետո այնտեղ բախումներ առաջանան, կամ եթե քրդերը փորձեն անկախություն հռչակել:

Ըստ էության, Բաշբուլի հայտարարությունը հետապնդում էր երկու նպատակ.

❖ այդ հայտարարությունն, առաջին հերթին, ուղղված էր հունվարի 31-ին եւ փետրվարի 5-ին Անկարայում սպասվող հյուրերին՝ ԱՄՆ պաշտպանության նախարարի քաղաքական գծով տեղակալ Դուգլաս Ֆեյթին եւ ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսին,

❖ երկրորդ. քրդական հարցի հետ կապված՝ Թուրքիան ի ցույց էր դնում իր շահերը պաշտպանելու *սեփական միջոցները*:

Թե՛ Ֆեյթը, թե՛ Ռայսը վստահեցրին Անկարային, որ ԱՄՆ-ը հետեւողական է Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման հարցում եւ, բացի այդ, երաշխավորում է, որ Իրաքի տարածքից հարձակումներ (գերազանցապես նկատի ունեն Քուրդիստանի բանվորական կուսակցությունը) չեն լինի ընդդեմ Թուրքիայի: Փոխարենը, փետրվարի 9-ին Մալաթիայի մայրաքաղաք Կուալա Լոււպուրում Իրանի արտգործնախարար Քամալ Խարազիի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը կոչ է արել Իրանին համատեղ աշխատել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) եւ եվրոպական եռյակի (Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա) հետ՝ նախազգուշացնելով, որ իրանական միջուկային ծրագրից Մերձավոր Արեւելքում կարող է ծագել նոր լարվածություն:

Անհրաժեշտ է այս համատեքստում դիտարկել նաեւ փետրվարի 1-ին Իսրայելի Գլխավոր սպայակույտի պետ, զեներալ-լեյտենանտ Մոշե Յաալոնի այցն Անկարա: Թեեւ պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, քննարկվել են երկուստեք ռազմական համագործակցության խնդիրներ (մասնավորապես, ծրագրվում է համատեղ արտադրել առանց օդաչուի թռչող հետախուզական ինքնաթիռներ), սակայն հարկավոր է

հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Յաալոնի այցը, փաստորեն, համընկավ Անկարա Դուզլաս Ֆեյթի այցի հետ: Պետք չէ բացառել, որ *իրանական հարցի վերաբերյալ կայացել է ամերիկա-թուրք-իսրայելական համատեղ քննարկում:*

Իսրայելա-պաղեստինյան հակամարտություն

Իր մերձավորարեւելյան այցի ժամանակ Քոնդոլիզա Ռայսը հանդիպումներ ունեցավ նաեւ Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի եւ Պաղեստինի Ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասի հետ: Միացյալ Նահանգների շահագրգռվածությունը՝ «կարգավորել» իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը, ըստ էության, պայմանավորված է իսլամական աշխարհին «Մերձավոր Արեւելքում ԱՄՆ քաղաքականության իրական նպատակներն ի ցույց դնելու» հանգամանքով:

Վերոհիշյալի համատեքստում սա նշանակում է, որ Վաշինգտոնը փորձում է իր առաջիկա ձեռնարկների համար ապահովել հնարավորինս բարենպաստ տեղեկատվական ֆոն:

Մյուս կողմից, իսրայելա-պաղեստինյան հակամարտության բանակցություններն ամենեւին էլ ձեռնտու չեն ԱՄՆ հակառակորդներին, ուստի պատահական չէ «Չզբուխ» եւ «Չամաս» կազմակերպությունների ընդդիմությունը այդ բանակցություններին: Այդ առումով հարկ է նաեւ ուշադրություն դարձնել Մահմուդ Աբասի անձի հետագա ճակատագրին:

Չեւեւություններ

Ըստ ամենայնի, սպասվում է մերձավորարեւելյան status quo-ի հերթական փոփոխություն, որի շարժիչ ուժն, առաջին հերթին, հանդիսանում է ԱՄՆ ձգտումը՝ ունենալ աշխարհաքաղաքական բացարձակ առավելություն Մերձավոր Արեւելքում:

Ընթացող գործընթացներում կենտրոնական տեղ է գրավում իրանական հարցը, որից էլ ածանցվում են այլ զարգացումները եւ պայմանավորվածությունները: Ամենալուրջ «նորությունը» կարող է առնչվել ամերիկա-եվրոպական, ամերիկա-ռուսական եւ ամերիկա-թուրքական հավանական նոր պայմանավորվածություններին, որոնց առաջին նշաններն արդեն իսկ կան:

Ի տարբերություն 2003թ. իրաքյան սցենարի, այս անգամ, ըստ ամենայնի, Չարավային Կովկասն անմիջականորեն ներգրավված է ընթացող զարգացումներում, ինչը չի կարող իր ազդեցությունը չունենալ Չայաստանի եւ Արցախի հարցի վրա:

ԻՐԱՔՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ *Արաքս Փաշայան*

Իրաքում Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո 2005թ. հունվարի 30-ին առաջին անգամ անցկացվեցին Ազգային ժողովի ընտրություններ: Շատերի կարծիքով՝ իրաքյան ընտրությունները պատմության մեջ պետք է մտնեին աննախադեպ զոհերով ու ավերածություններով: Չնայած այդ օրը երկրի տարբեր շրջաններում ահաբեկչության թիրախ դարձան հարյուրից ավելի մարդիկ, սակայն անվտանգության խստացուցիչ պայմանների շնորհիվ Իրաքի ժամանակավոր կռապետը կառավարությանը եւ ամերիկյան վարչակազմին հաջողվեց, այնուամենայնիվ, իրականացնել դրանք: ԱՄՆ քարոզչական մեքենան, տարփողելով իրաքյան ընտրությունները, դրանք ներկայացրեց որպես Մերձավոր Արեւելքում ժողովրդավարության տարածման ԱՄՆ ջանքերի արդյունք:

Խորհրդարանի 275 տեղերի համար պայքարում էին 7700 թեկնածուներ: Ընտրություններին մասնակից կուսակցություններն ու կազմակերպությունները հիմնականում հանդես եկան դաշինքներով: Ընտրություններին մասնակցել է 8,5 միլիոն մարդ՝ ընտրողների 60%-ից ավելին: Մասնակցությունը խիստ բարձր է եղել շիաբնակ շրջաններում եւ քրդական ինքնավարությունում: Նախնական տվյալներով՝ ձայների մեծամասնություն (շուրջ 48%) ստացել են Իրաքի շիաների հոգեւոր առաջնորդ այաթոլա Ալի Հուսեյն աս-Սիսթանիի կողմից հովանավորվող «Իրաքի ազգային միացյալ դաշինքը» եւ քրդական կուսակցությունները (մոտ 25%): Իրաքի ժամանակավոր կառավարության վարչապետ, շիա Այադ Ալավիի գլխավորած դաշինքը հավաքել է 13%:

Իրաքի բնակչության 20%-ը կազմող սուննիները, իրենց հոգեւոր առաջնորդների կոչերին ընդառաջ գնալով, ընդհանուր առմամբ, բոյկոտեցին ընտրությունները (չնայած ընտրվածների մեջ կան քիչ թվով սուննիներ, օրինակ՝ Իրաքի ժամանակավոր նախագահ Ղազի ալ-Յավարը, որի գլխավորած «Իրաքյան ցուցակը» խորհրդարանում հինգ տեղ ստացավ): «Սուննիական եռանկյունին» հունվարի 30-ին աչքի ընկավ դատարկ փողոցներով: Սուննիաբնակ շրջաններում անվտանգության բացակայության պայմաններում սուննի արաբները հազիվ թե կարող էին իրականացնել իրենց քաղաքացիական պարտքը: Սուննի հոգեւորականությունն արդեն հայտարարել է, թե չի ճանաչի հունվարի 30-ի համազգային ընտրությունները, քանի որ սուննիների գերակշիռ մասը դրանց չի մասնակցել:

Սուեննի մի կազմակերպության՝ «Մահմեդական գիտնականների ասոցիացիայի» տարածած հայտարարության մեջ մասնավորապես նշված է. «Մենք հարգում ենք նրանց ընտրությունը, ով արդեն քվեարկել է, սակայն պատրաստվում ենք նորընտիր կառավարությունը դիտարկել որպես բացառապես ժամանակավոր՝ սահմանափակ իշխանությամբ»:

Սուեննի արաբների պասիվության պայմաններում Իրաքի բնակչության մոտ 18%-ը կազմող քրդերի համար իրական հնարավորություն ստեղծվեց ավելացնել տեղերը խորհրդարանում եւ փորձել իրենց պայմանները թելադրել շիաներին եւ ամերիկյան վարչակազմին: Քրդական քաղաքական կուսակցությունները միավորեցին իրենց հնարավորությունները: Քուրդիստանի երկու խոշոր՝ ժողովրդավարական Քուրդիստան կուսակցությունը եւ Քուրդիստանի հայրենասիրական միությունը համդես եկան համատեղ ցուցակով: Քրդերը պահանջում են ինքնավարությանը միացնել քրդաբնակ եւ նավթային պաշարներով հարուստ Քիրքուկը, որի ժողովրդագրական պատկերը փոխվել է Սադամ Յուսեյնի իշխանության տարիներին, սուեննիների բնակեցմամբ: Քրդական ինքնավարությունում ակնհայտ են անկախական ձգտումները, որոնք ընդդիմադիր արձագանք են գտնում ոչ միայն Իրաքում, այլեւ քուրդ բնակչություն ունեցող Թուրքիայում, ինչպես նաեւ՝ Սիրիայում եւ Իրանում:

Իրաքում ԱՄՆ ներխուժումից հետո սկիզբ առած պարտիզանական եւ ընդդիմադիր շարժումը, հիմնականում սուեննիական մասնակցությամբ, պահանջում է երկրից օկուպացիոն ուժերի անհապաղ դուրսբերումը: Շարժման մեջ ներգրավված են նախկին բասսականներ եւ կրոնաքաղաքական արմատական կազմակերպություններ («Իրաքի իսլամական բանակը», «Իրաքի մոջահիդների բանակը», «Սուեննայի պաշտպանների բանակը» եւ այլն), ինչպես նաեւ միջազգային իսլամական ահաբեկչական կազմակերպություններ ու մահմեդական վարձկաններ: Համաձայն ամերիկյան աղբյուրների՝ Իրաքում ընդդիմադիր շարժման մեջ ներգրավվածների թիվը 13-17 հազար է:

Հնարավոր բոլոր միջոցներով ընտրությունները տապալելու եւ ժողովրդավարության դեմ պատերազմելու կոչեր արեց իրաքյան «Ալ-Կաիդայի» առաջնորդ, հորդանանյան ծագումով Աբու Մուսաբա ազ-Չարկավին, որն իր գործունեությունը սկսել է 1980-ականներին Պակիստանում ԱՄՆ ֆինանսավորած մոջահիդների ճամբարներում: Իրաքի օկուպացիայից ի վեր «Ալ-Կաիդան» այս երկրում իրականացրել է մի շարք ահաբեկչություններ ու բռնություններ: Համաձայն արաբական մամուլում տեղ գտած նյութերի՝ «Ալ-Կաիդան» Իրաքում մարտնչող գրոհայիններին հավաքագրում է Աֆղանստանից, Մավրիտանիայից եւ մահմեդական այլ շրջաններից: Եղած փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ Իրաքն

աստիճանաբար կարող է վերաճել մոջահիդների գործունեության եւ ահաբեկչության տարածման մի նոր օջախի, ինչպես Աֆղանստանն էր խորհրդային օկուպացիայից հետո:

Մինչդեռ շիաների հոգեւոր առաջնորդ այաթուլա Ալի աս-Սիսթանին իր հավատակիցներին կոչ արեց կատարել կրոնական պարտքը եւ մասնակցել ընտրություններին: Իրանում վտարանդիության մեջ ապրած շիա բարձրաստիճան հոգեւորականը մշտապես հանդես է եկել Իրաքից օկուպացիոն ուժերը դուրս բերելու եւ ընտրությունները նշված ժամանակին անցկացնելու կոչերով՝ առանց ԱՄՆ-ի հետ ավելորդ առճակատման:

Ընտրություններին թե՛ քրդերի եւ թե՛ շիաների վճռականությունը պայմանավորված էր պատմական պահի գիտակցումով: Իրաքի բնակչության 60%-ը կազմող շիա բնակչությունը այս երկրի պատմության մեջ առաջին անգամ ազատ ընտրությամբ փորձեց ձերբազատվել սուննի փոքրամասնության գերիշխանությունից եւ ձեռք բերել փաստացի իշխանություն: Ի սկզբանե ԱՄՆ-ի համար շիաները կարեւոր հենարան էին եւ պետք է գլխավոր դերը ստանձնեին հետպատերազմյան Իրաքում: Շիաները, որ ողջունեցին Սադամ Յուսեյնի վարչակարգի տապալումը, ԱՄՆ-ի դեմ պայքարում ծայրահեղ քայլերի գրեթե չեն գնացել, չհաշված մինչեւ 1999թ. շիաների հոգեւոր առաջնորդ, հանգուցյալ այաթուլա Մուհամեդ Սադեկ աս-Սադրի որդու՝ Մուկթադա աս-Սադրի ղեկավարությամբ զինված ելույթները: Ի դեպ, վերջինիս համախոհները խորհրդարանում երեք տեղ են ստացել:

Իրաքը համարվում է շիականության ավանդական տարածման շրջաններից մեկը: Նաջաֆում եւ Քերբալայում են գտնվում շիական գլխավոր սրբավայրեր Ալիի եւ Յուսեյնի գերեզմանները: Ուսումնասիրողները հաճախ փորձում են ընդհանրություններ անցկացնել Իրանի եւ Իրաքի շիաների միջեւ: Վերջիններս, սակայն, էթնիկ արաբներ են՝ ոչ միանշանակ իրանական կողմնորոշմամբ:

«Իրաքի ազգային միացյալ դաշինքը», որտեղ միավորվել էին 17 շիական կուսակցություններ ու կազմակերպություններ, ղեկավարում է «Իրաքի իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի» (ԻԻՅԲԽ) առաջնորդ Աբդ ալ-Ազիզ ալ-Յաքինը: ԻԻՅԲԽ-ն հիմնել է վերջինիս եղբայրը՝ Սադամ Յուսեյնին ընդդիմադիր այաթուլա Մուհամեդ Բաքր ալ-Յաքինը 1982թ.՝ Իրանում վտարանդիության մեջ գտնվելու ժամանակ եւ մինչեւ իր մահը ղեկավարել այն: Նա նույնպես ԱՄՆ-ի հետ առճակատման չզնաց եւ համաձայնեց ԻԻՅԲԽ անդամներին ներառել ժամանակավոր կառավարության մեջ: 2003թ. հունիսին սաուդական «Ալ-Յաթա» թերթին տված հարցազրույցում ալ-Յաքինը նշել էր, որ «օկուպացիային դիմադրությունը պետք է խաղաղ լինի»: 2004թ. ամռանը ալ-Յաքինը իր

բազմաթիվ համախոհների հետ ահաբեկչական գործողության զոհ դարձավ Նաջաֆուն, Ալիի մզկիթում ուրբաթօրյա աղոթքի ավարտից հետո: Ալ-Ջաքիմի սպանության մեջ, ըստ արեւմտյան աղբյուրների, կասկածվում է «Ալ-Կաիդան»:

Ի դեպ, Սադամ Յուսեյնի վարչակարգի տապալումից հետո Իրաքում սպանվել են երկու տասնյակից ավելի բարձրաստիճան շիա հոգեւորականներ: Նրանցից հայտնի է այաթուլա Աբդ ալ-Մաջիդ Խոյին, որը սպանվեց 2003թ. ապրիլին Նաջաֆուն, Ալիի մզկիթի մոտ: Խոյիի նպատակը Իրաքում ամերիկամետ եւ Իրանին այլընտրանքային շիական կենտրոնի ստեղծումն էր, սակայն ոչ հոմեյնիական եղանակով:

Նշենք, որ աս-Սիսթանին նույնպես դեմ է Իրաքում իրանական մոդելի աստվածապետության ստեղծմանը եւ իշխանության մեջ հոգեւորականների մասնակցությանը՝ կողմ լինելով Իրաքում իսլամական սկզբունքների ներդրմանը:

Փորձագետներից շատերի կարծիքով՝ հետընտրական Իրաքում հնարավոր է իրավիճակի առավել սրում, ընդհուպ մինչեւ քաղաքացիական պատերազմ կրոնական երկու համայնքների՝ շիաների եւ սուննիների միջեւ: Սուննիների ծայրահեղ գործողությունների դեպքում շիական շարժումը կարող է արմատականանալ եւ հուզումների նոր ալիք առաջացնել: Շիաների դեմ սուննիների բռնությունները ստիպում են մտածել ինքնապաշտպանության եւ անվտանգության մասին, մանավանդ այն պարագայում, երբ ամերիկյան վարչակազմին եւ տեղի իշխանություններին չի հաջողվում երկրում անվտանգություն ապահովել եւ կարգուկանոն հաստատել: Նշենք, որ ԻԻՅԲԽ-ն ունի իր «Բադր» ռազմական թեւը, որն արեւմտյան աղբյուրների համաձայն, շուրջ 30 հազար մարտիկներ ունի, ժամանակակից զենք եւ տեխնիկա:

Ինչեւէ, Իրաքում ընտրություններն արդեն իրողություն են, եւ երկրում ստեղծվել է որակապես նոր իրավիճակ: Արդյո՞ք Իրաքը կդառնա դաշնային ժողովրդավարական երկիր, որտեղ կգերիշխի օրենքը եւ կգործեն բոլոր քաղաքական ինստիտուտները, ի՞նչ դերակատարություն կունենա իսլամը հասարակական-քաղաքական գործընթացներում. ներկայումս այս հարցերին դժվար է միանշանակ պատասխանել:

Որոշ մասնագետների կարծիքով՝ ընտրություններն Իրաքում վաղաժամ էին, քանի որ իրաքցիները դեռեւս չեն կողմնորոշվել, թե քաղաքական ինչ մոդելի կողմնակից են: Իրաքի ապագայի հարցում առաջ են քաշվել տարբեր ծրագրեր՝ սկսած էթնո-դավանական սկզբունքով երկրի տրոհումից մինչեւ համադաշնություն: Շրջանառվում է նաեւ Իրաքում *լիբանանյան մոդելի* ներդրման գաղափարը: Լիբանանն արաբական պետությունների շարքում առանձնանում է ուրույն պետական կառուց-

վածքով, որի հիմքում ընկած է կրոնադավանական սկզբունքը: Համաձայն 1943թ. կնքված «Ազգային դաշինքի»՝ Լիբանանի նախագահը պետք է լինի քրիստոնյա մարոնի, վարչապետը՝ սուննի, խորհրդարանի նախագահը՝ շիա, արտգործնախարարը՝ հույն-ուղղափառ, պաշտպանության նախարարը՝ դրուզ եւ այլն: Կրոնական սկզբունքը պահպանվում է վարչական համակարգում պաշտոնների նշանակման եւ խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման ժամանակ նույնպես: Չի բացառվում, որ այս համակարգի ներմուծմամբ Իրաքում հնարավոր լինի հավասարակշռություն ստեղծել:

Սակայն ցանկացած ձեւաչափի դեպքում՝ ԱՄՆ-ը ձգտելու է իր համար վերահսկելի վարչակարգի ձեւավորմանը: Միաժամանակ, հետայսու էլ ԱՄՆ-ը կբախվի նորանոր խնդիրների եւ իրար հետ հակասություններ ունեցող տարբեր համայնքների անվերջանալի պահանջների հետ, որն ամբողջությամբ բավարարել ի վիճակի չի լինի:

Ի դեպ, ընտրություններից հետո Իրաքում ուժեղացել է պարտիզանական շարժումը եւ ահաբեկչությունների նոր ալիք սկսվել, իսկ նոր կառավարության ձեւավորման գործընթացն արդեն լարվածություն է առաջացրել հենց շիաների ներսում: Չնայած, ըստ որոշ տեղեկությունների, ԱՄՆ պաշտպանության նախարարությունը ծրագրել էր մինչեւ 2005թ. հունվար ամիսը Իրաքում ապստամբական շարժումը վերջնականապես ճնշել, սակայն իրավիճակը երկրում շարունակում է մնալ անվերահսկելի:

Իրաքյան հասարակության երկփեղկվածությունը հաղթահարելու եւ կայունությունը վերականգնելու համար անհրաժեշտ է, որպեսզի Իրաքի կրոնադավանական եւ էթնիկ համայնքները կարողանան երկխոսություն սկսել: ԻԻԴԲԽ նախագահ ալ-Հաքիմն արդեն հայտարարել է, թե նոր կառավարությունում սուննիները, ինչպես նաեւ Իրաքի բոլոր համայնքները պետք է ներկայացված լինեն: Ալ-Հաքիմը նաեւ կոչ է արել սուննիներին՝ մասնակցել նոր սահմանադրության նախագծի մշակմանը:

Կարելու պայման է նաեւ, որպեսզի օկուպացիոն ուժերը, իրավիճակի որոշակի կայունացումից հետո, ի վերջո հեռանան երկրից: Մեծ Բրիտանիան ԱՄՆ-ից արդեն պահանջում է ներկայացնել Իրաքից զորքերի դուրսբերման ստույգ գրաֆիկ, որին ԱՄՆ-ը դեռեւս չի արձագանքել:

**ՆԱԿԹԻ ԳՈՐԾՈՆԸ ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

Ամերիկյան նեոկոնսերվատորների հետ սերտ կապերի մեջ գտնվող «The Weekly Standard» շաբաթաթերթը ս.թ. փետրվարի 7-ին հիշարժան մի հոդված տպագրեց, որը հայերեն թարգմանաբար հնչում է «Նավթի առանցքը» («The Axis of Oil») եւ անգլերեն բավականին նման է «Չարիքի առանցք» («The Axis of Evil») անվանմանը: Այս նոր առանցքում ընդգրկված են Չինաստանը եւ Ռուսաստանը, առաջինը՝ որպես նավթով հարուստ երկրներում ակտիվացող պետություն, երկրորդը՝ որպես նավթային հզոր տերություն:

Նշենք, որ Չինաստանի տնտեսական եւ ռազմական աճի գործոնը ամերիկյան նեոկոնսերվատորների ծրագրերում զբաղեցնում է շատ կարեւոր տեղ:

Ամերիկյան ներկայիս վարչակազմի քաղաքական գծի որոշ հիմնադրույթներ մշակվել եւ ներդրվել են դեռ 1990-ական թվականներին, «Նոր ամերիկյան հարյուրամյակ» ծրագրի շրջանակներում: Այս ծրագրի մշակման աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսին են ԱՄՆ փոխնախագահ Դ.Չեյնին, պաշտպանության նախարար Դ.Ռամսֆելդը եւ նեոկոնսերվատորների խոշոր ստրատեգ, պաշտպանության փոխնախարար Պ.Վուլֆովիցը:

«Նոր ամերիկյան հարյուրամյակ» ծրագրի հետազոտությունների մեջ կենտրոնական տեղը զբաղեցնում են Չինաստանին, նրա հզորացմանը եւ դրա կանխարգելմանը վերաբերող ուսումնասիրությունները: Ըստ «Նոր ամերիկյան հարյուրամյակ» ծրագրի վերլուծությունների, 21-րդ դարում հենց Չինաստանն է վերածվելու ամերիկյան շահերին սպառնացող հիմնական պետության: Այս տեսակետից ԱՄՆ կառավարությունը պետք է ջանք չխնայի Չինաստանի հզորացումը կանխելու համար:

Չինաստանի հետ հնարավոր կոնֆլիկտի մասին քանիցս նշել է ԱՄՆ պաշտպանության նախարար Դ.Ռամսֆելդը: Նա պատկանում է ամերիկյան այն քաղաքական գործիչների սերնդին, որոնք իրականացրել են ամերիկյան ռազմական ուժի վերակազմավորումը վիետնամական պատերազմի ավարտից հետո: Սակայն ներկայիս ռազմական կազմակերպման համակարգը, ըստ Ռամսֆելդի, ի վիճակի չէ ապահովել ամերիկյան գերիշ-

խանութայան պահպանումը նոր պայմաններում: «Ռազմական գործում հեղափոխություն» կատարելու աշխատանքները եւ ծրագրերը մշակելու համար Ռամսֆելդը Բուշ-կրտսերի վարչակազմ հրավիրեց 80-ամյա Է.Մարշալին, որը երկար տարիներ աշխատել է Պենտագոնի ռազմական պլանավորման կառույցներում: Ըստ Մարշալի՝ ԱՄՆ ռազմական ուժերը դեռ շարունակում են պատրաստվել «անցած պատերազմների համար», այն ժամանակ, երբ ԱՄՆ հնարավոր թշնամին լինելու է ոչ թե «թուլացած Ռուսաստանը», այլ «հզորացող Չինաստանը»:

Սակայն ոչ միայն ռազմական տեսակետից է, որ ամերիկացիները պետք է կանխարգելեն Չինաստանի հզորացումը: Կարելի է նաեւ տնտեսական գործոնը, որի կտրվածքով Չինաստանը ցուցաբերում է հատուկ ակտիվություն: Հենց տնտեսական դաշտում է հիմնականում ընթանալու ամերիկա-չինական հակամարտությունը:

Չինաստանի արագ աճող տնտեսությունը էներգակիրների մեծ կարիք ունի: 2003 թվականին Չինաստանը ներմուծել է 83 միլիոն տոննա նավթ, ինչը 31 տոկոսով ավելի է, քան 2002-ի ցուցանիշը: Այս ցուցանիշը շարունակում է արագորեն աճել, ավելի արագ, քան ցանկացած այլ երկրում: Ըստ փորձագիտական հաշվարկների, Չինաստանի նավթի պահանջարկը 2020 թվականին կարող է հասնել 400 մլն տոննայի, ինչը պահանջում է մշանակալիորեն ավելացնել ներմուծվող նավթի ծավալները:

Եւթեք, որ այսօր Չինաստանի կողմից ներմուծվող նավթի 60 տոկոսն ունի մերձավորարեւելյան ծագում եւ հիմնականում ներկրվում է Իրանից, Կատարից եւ Օմանից: Ըստ «*International Energy Outlook*»-ի 1998-ի տվյալների՝ 2020 թվականին Չինաստանի՝ Մերձավոր Արեւելքի երկրներից ներկրած նավթի չափաբաժինը կհասնի 91 տոկոսի, ինչը կնշանակի Չինաստանի տնտեսության կախվածությունը այս տարածաշրջանից: Այս իրողությունը հասկանում են ոչ միայն չինացիները, այլ նաեւ Չինաստանի հզորացումն ամեն կերպ կանխարգելող Միացյալ Նահանգները: Այս երկու կողմերն էլ անելու են ամեն ինչ, որպեսզի անբարենպաստ պայմաններ ստեղծեն Մերձավոր Արեւելքում միմյանց համար:

Չինաստանի նավթային քաղաքականությունը այսօր հիմնականում ուղղված է նավթ արտահանող երկրների հետ կապեր եւ համագործակցություն հաստատելուն: Այս քաղաքականության հիմնական ուղղություններն ու արդյունքներն են.

1. Չինա-իրանական համագործակցություն

Չինա-իրանական առեւտրային պալատը հիմնադրվել է 2000 թվականին: Իրանի եւ Չինաստանի միջեւ ապրանքաշրջանառությունը 2004-ին հասել է 7 մլրդ դոլարի, ինչը 25 տոկոսով ավելի է 2003-ի ցուցանիշներից:

Ապրանքաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է եղել իրանական եւ չինական նավթային ընկերությունների միջեւ տնտեսական համագործակցության զարգացմամբ: 2004-ին Չինաստանը եւ Իրանը ստորագրել են համաձայնագիր, համաձայն որի չինական «*Sinopec*» ընկերությունը 30 տարում իրանական գազի սեկտոր բազմամիլիարդ ներդրումներ է կատարելու, ինչպես նաեւ պարտավորվում է Յավանդարան նավթավայրից 30 տարվա ընթացքում օրական 150000 բարել նավթ գնել:

2. Չինա-սաուդական համագործակցություն

2004-ին «*Sinopec*» ընկերությունը 300 միլիոնանոց համաձայնագիր է ստորագրել սաուդական «*ARAMCO*» ընկերության հետ Սաուդյան Արաբիայի տարածքում գազի սեկտորի զարգացման վերաբերյալ: Չինաստանը նաեւ պարտավորվում է գնել սաուդական նավթի որոշակի քանակ 20 տարվա ընթացքում: Հետաքրքիրն այն է, որ թե՛ Իրանի, թե՛ Սաուդյան Արաբիայի դեպքում Չինաստանը գործ ունի պետական նավթային եւ գազային ընկերությունների հետ, ինչը նշանավորում է նաեւ քաղաքական մերձեցում Չինաստանի եւ մերձավորարեւելյան այս երկու պետությունների միջեւ: Հատկանշական է, որ Սաուդյան Արաբիայից ստացված նավթի մի մասի փոխարեն Իրանը սաուդներին անվճար զենք է մատակարարում, ինչը զարգացնում է նաեւ այս երկու պետությունների ռազմատեխնիկական համագործակցությունը եւ, միաժամանակ, թուլացնում է Սաուդյան Արաբիայի կախվածությունը ամերիկյան ռազմաներքի ներկրումից:

3. Չինա-կանադական համագործակցություն

2004-ին Կանադայի վարչապետի՝ Չինաստան կատարած այցի ժամանակ երկու երկրների միջեւ կնքվեց համաձայնագիր էներգետիկ ոլորտում համագործակցության մասին, որը նախատեսում է նաեւ կանադական նավթի՝ Չինաստան արտահանումը: Նշենք, որ համաձայնագիրը առաջ բերեց ԱՄՆ զայրույթը, քանզի նրանք են հանդիսանում կանադական նավթի հիմնական գնորդը:

*4. Չինա-վենեսուելական համագործակցություն **

2004-ին Չինաստանը պարտավորվեց 400 միլիոն դոլարի ներդրում իրականացնել Վենեսուելայի նավթային սեկտորի զարգացման ծրագրերում, իսկ Վենեսուելան պարտավորվեց օրական 120000 բարել նավթ վաճառել Չինաստանին: Նշենք, որ վենեսուելական նավթի հիմնական գնորդը Միացյալ Նահանգներն է:

2004-ը՝ արտաքին համագործակցության տեսանկյունից, ամենա-

ակտիվ տարին եղավ Չինաստանի եւ նրա նավթային ընկերությունների համար:

Այս փաստը կարելի է բացատրել նաեւ նրանով, որ չինացիները իրաքյան պատերազմից հետո հասկացել են, թե ԱՄՆ-ը, իր արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար, որոնց թվում է նաեւ Չինաստանի հզորացումը կանխարգելելը, օգտագործելու է բոլոր միջոցները:

Ըստ ամերիկյան ստրատեգների՝ մերձավորարեւելյան նավթի նկատմամբ վերահսկողության հաստատումը կապահովի ոչ միայն ԱՄՆ էներգետիկ անվտանգությունը, այլեւ կօգնի վերահսկողություն հաստատել Չինաստանին նավթ մատակարարող պետությունների վրա: Այս տեսակետից իր նավթային պաշարներով եւ, հետեւաբար, քաղաքական նշանակությամբ առաջնային տեղ ունի Մերձավոր Արեւելքը: Ըստ Ռուսաստանի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Լ.Իվաշովի՝ ԱՄՆ-ը մինչեւ 2012 թվականը որոշել է լիակատար վերահսկողություն հաստատել Մերձավոր Արեւելքի նավթի պաշարների վրա: Այս տեսակետից, առավել կարեւոր է Իրանի նկատմամբ վերահսկողության հաստատումը, քանի որ իսլամական հանրապետությունը այս տարածաշրջանի ամենաանկախ նավթային քաղաքականություն վարող պետությունն է, ինչպես նաեւ՝ Չինաստանի թիվ մեկ նավթային գործընկերը:

Այնպես որ, Իրանի շուրջ վերջին զարգացումները ինչ-որ տեղ պետք է դիտել նաեւ ԱՄՆ՝ Չինաստանի նկատմամբ տարվող քաղաքականության համատեքստում:

* Հատուկ հոդվածով մենք անդրադարձել ենք նաեւ չինա-ղազախական համագործակցությանը («Հանրապետական» ամսագիր, թիվ 6, 2004) եւ այստեղ դրա վրա կանգ չենք առնի:

ՀՍԿԱՆԵՐԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏ

*Ռազմավարական ու միջազգային հետազոտությունների կենտրոնի խորհրդատու **Զբիգնեյ Բժեզիճնսկի** եւ Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության պատվավոր պրոֆեսոր **Ջոն Միրսհայմերը** «Պատապարտված են, արդյոք, Միացյալ Նահանգներն ու Չինաստանը առճակատման» հարցի վերաբերյալ արտահայտում են տարբեր տեսակետներ:*

Զբիգնեյ Բժեզիճնսկի

Այսօր Չինաստանը վերելք է ապրում՝ առայժմ խաղաղ: Հասկանալի պատճառներով, չինացիները վիրավորանքի, նույնիսկ ստորացման զգացում են ապրում՝ վերհիշելով սեփական պատմության որոշ էջեր: Ազգայնականությունը հզոր ուժ է, ու երկրում միջազգային կարգի առանձին խնդիրների (հատկապես Թայվանի) շուրջ առկա է լուրջ դժգոհություն: Սակայն ԱՄՆ-ի ու Չինաստանի միջեւ առճակատումը չի կարելի անխուսափելի համարել. առավել եւս՝ դրա հավանականությունը փոքր է: Չինաստանի ղեկավարությունը մտադիր չէ ռազմական ոլորտում մարտահրավեր նետել Միացյալ Նահանգներին. այն առաջվա պես ուշադրությունը կենտրոնացնում է տնտեսական զարգացման վրա եւ ձգտում հասնել մեծ տերության կարգավիճակի ճանաչման:

Չինացիները չափազանց մտահոգված են իրենց երկրի հետագա առաջընթացի հարցով: Վերջերս հանդիպեցի ՉԺՀ բարձրագույն ղեկավարությանը, որոնք ինձ համառորեն հորդորում էին կանխատեսել իրավիճակը մոտակա 15-20 տարիներին: Նույն վերջերս Չինաստանի Քաղբյուրոն հատուկ խորհրդակցության էր հրավիրել Արեւմուտքում կրթություն ստացած երկու վաստակաշատ պրոֆեսորների: Նրանց խնդիրն էր՝ վերլուծել ինը խոշորագույն տերությունների զարգացումը՝ սկսած 15-րդ դարից ու հայտնաբերել նրանց վերելքի եւ անկման պատճառները:

Անցյալի մեծ տերությունների փորձի նկատմամբ նման հետաքրքրությունը կարող է հանգեցնել այն հետեւությանը, թե քաղաքական տեսության ու պատմության օրենքներով է պայմանավորված որեւէ ընդհարման կամ հակամարտության անխուսափելիությունը: Բայց գոյություն ունեն մաքուր այլ քաղաքական իրողություններ: Մոտակա հինգ տարում Չինաստանում կկայանան մի քանի խոշոր միջոցառումներ, ինչը կհարկադրի այդ երկրին զսպվածություն ցուցաբերել արտաքին քաղաքականությունում:

Դրանցից ամենանշանավորը, անշուշտ, 2008թ. Օլիմպիական խաղերն են: Պեկինյան Օլիմպիադայում ներդրված տնտեսական ու մտավոր պաշարների ծավալն ուղղակի ապացնում է: Կարծում եմ, որ այն կկազմակերպվի ամենաբարձր մակարդակով: Եվ համոզված եղե՞ք՝ Չինաստանը լի է այդ Օլիմպիադայում հաղթելու վճռականությամբ: Երկրորդ նշանակալից սահմանագիծը 2010 թվականն է, երբ Շանհայում կանցկացվի Համաշխարհային ցուցահանդես: Չինաստանն այս միջազգային միջոցառումների հաջող անցկացմանը մեծ նշանակություն է տալիս, ուստի կարելի է ենթադրել, որ նա արտաքին քաղաքականությունում զգուշավորություն կցուցաբերի:

Ընդհանուր առմամբ, Չինաստանն իր տնտեսական աճի կայունությունն ապահովելու համար վճռականորեն է տրամադրված: Առճակատման արտաքին քաղաքական ուղին կարող է խաթարել այդ աճը, բացասաբար անդրադառնալ 100 միլիոնավոր չինացիների բարեկեցության վրա եւ վտանգել կոմունիստական կուսակցության իշխանությունը: Չին դեկավարներին ես համարում եմ խոհամիտ ու հաշվեկատ, որոնք լավ գիտեն ոչ միայն սեփական երկրի նվաճումները, այլեւ թուլությունները:

Տարածաշրջանում Չինաստանի դիրքերի ուժեղացման եւ սեփական ազդեցության ոլորտի ձեւավորման հետեւանքով տարածայնություններ անխուսափելիորեն կառաջանան: Հնարավոր է, որ ապագայում ԱՄՆ հզորությունն աստիճանաբար անկում ապրի, իսկ ճապոնիայի ազդեցության անխուսափելի թուլացումը կհանգեցնի չինացիների մոտ տարածաշրջանում սեփական արժեքի զգացումի ուժեղացման: Սակայն, որպեսզի Չինաստանը համարձակվի գնալ ԱՄՆ-ի հետ իրական ընդհարման, նրան անհրաժեշտ են ամերիկյանի հետ հնարավորություններով համեմատելի զինված ուժեր: Այսօր ռազմավարական մակարդակում Չինաստանը հետեւում է «նվազագույն հակադարձման» հայեցակարգին: Արդեն 40 տարի է անցել այն պահից, երբ Չինաստանը ստեղծեց միջուկային զենք, սակայն այն առաջվա պես ունի ընդամենը ԱՄՆ տարածք հասնելու ընդունակ 26 բալիստիկ հրթիռ: Ընդ որում, եթե մենք նույնիսկ հեռանանք ռազմավարական սպառազինությունների ոլորտից, ցանկացած երկիր, նախքան սահմանափակ պատերազմ սկսելը, պետք է տիրապետի այնպիսի ներուժի, որը թույլ կտա նրան հասնելու իր քաղաքական նպատակներին: Դժվար է պատկերացնել, թե ինչ կերպ է այդ ներուժը Չինաստանի մոտ հայտնվելու. չէ՞ որ ամերիկյան շրջափակման եւ արտաքին աշխարհից մեկուսացման դեպքում այն կհայտնվի չափազանց խոցելի վիճակում: Առճակատման դեպքում ծովով չինական առետրային մատակարարումներն ամբողջովին կընդհատվեն: Երկիր կդադարի նավթ մտնել, ու նրա տնտեսությունը պարզապես կաթվածահար կլինի:

Չնայած կտրուկ հայտարարություններին, ինձ թվում է, որ չինացիները Թայվանի նկատմամբ զգուշավոր մոտեցման կողմնակից են: Նախորդ տարվա մարտին Չինաստանի կոմկուսի պաշտոնական օրգանում նշվեց, թե «ըստ էության, նախագահ Չենի իշխանության գալուց հետո հաջողվեց վերացնել Թայվանի կողմից անկախության ուղղակի հռչակման վտանգը, խուսափել վատթարագույն սցենարից եւ պահպանել Թայվանի՝ որպես Չինաստանի մասի կարգավիճակը»: Այդ օրերին Պեկինում անցկացված հասարակական կարծիքի հարցախույզի տվյալներով, հարցման ենթարկվածների 58%-ը գտնում էր, թե ռազմական գործողությունների անհրաժեշտություն չկա: Սոսկ 15%-ն էր հանդես եկել ռազմական միջոցներով Թայվանն «ազատագրելու» օգտին:

Անշուշտ, ներկայիս կայունությունը չի երաշխավորում վաղվա խաղաղությունը: Օրինակ, եթե Չինաստանի ներսում տեղի ունենա բռնության պոռթկում՝ այն կխառնի բոլոր խաղաքարտերը: Եթե երկրում սոցիալ-քաղաքական լարվածությունը կամ նյութական անհավասարությունն ընդունեն անվերահսկելի ծավալներ, ղեկավարության մոտ կարող է առաջանալ ազգայնական տրամադրությունների վրա խաղալու գայթակղություն: Սակայն նման աղետի հավանականությունը մեծ չէ եւ չի ազդում իմ համոզվածության վրա, թե տվյալ պարագայում մենք կարող ենք խուսափել այն բացասական հետեւանքներից, որոնք հաճախ ուղեկցում են նոր մեծ տերությունների առաջացմանը: Չինաստանն ակնհայտորեն ինտեգրվում է միջազգային համակարգին: Դատելով ամենից՝ նրա ղեկավարությունը հասկանում է, որ միջազգային ասպարեզից Միացյալ Նահանգներին դուրս մղելու փորձերը դատապարտված են տապալման, իսկ գլոբալ գերակայության հասնելու ամենավստահելի ճանապարհը Չինաստանի ազդեցության զգուշավոր եւ աստիճանական մեծացումն է:

Ջոն Միրսհայմեր

Չինաստանի վերելքը չի կարող խաղաղ ընթանալ, ու եթե մոտ տասնամյակներում երկրում տնտեսական աճը շարունակվի նույն տեմպերով, ապա ԱՄՆ-ի ու Չինաստանի միջեւ, ամենայն հավանականությամբ, սուր մրցակցություն կծագի, ինչը կարող է վերջանալ պատերազմով: Չինաստանի հարեւան երկրների մեծ մասը, այդ թվում՝ Վիետնամը, Հնդկաստանը, Ռուսաստանը, Սինգապուրը, Հարավային Կորեան եւ Ճապոնիան, նույն հավանականությամբ, չինական հզորության կասեցման քաղաքականության հարցում կմիանան Միացյալ Նահանգներին:

Ցանկացած մեծ տերության վերջնական նպատակն աշխարհում սեփական դիրքի առավելագույն ամրապնդումն է, իսկ հետո՝ նաեւ միջազ-

գային հարաբերությունների ողջ համակարգի վրա գերիշխանություն հաստատելը: Սակայն ժամանակակից աշխարհում ոչ մի պետություն գործնականում ի վիճակի չէ հասնելու համաշխարհային գերիշխանության, քանզի համայն աշխարհի վրա հսկողություն սահմանելն ու պահպանելը չափազանց դժվար է: Նույնիսկ Միացյալ Նահանգները տարածաշրջանային, այլ ոչ թե համաշխարհային հեգեմոն է: Առավելագույնը, ինչին ցանկացած պետություն կարող է հուսալ, գերիշխանությունն է սեփական «բակում»:

Չինաստանը, ամենայն հավանականությամբ, կջանա Ասիայում հաստատել այնպիսի գերիշխանություն, ինչպիսին Արեւմտյան կիսագնդում ունի Միացյալ Նահանգները: Չինաստանն իր հարեւանների, հատկապես՝ Ռուսաստանի ու Ճապոնիայի հանդեպ ձգտում է հասնել առավելագույն գերակայության՝ դրանով երաշխավորելով, որ ոչ մի ասիական պետություն ի վիճակի չլինի սպառնալ իրեն: Դժվար թե Չինաստանը դիմի սանձարձակ գործողությունների՝ գրավի մյուս ասիական երկրները: Ավելի հավանական է, որ նա փորձի հարեւան պետություններին պարտադրել գործելու «ընդունելի շրջանակներ», գրեթե նույն կերպ, ինչպես վարվում է ԱՄՆ-ը Յուսուսային ու Յարավային Ամերիկայում: Բացի այդ, հզորացող Չինաստանը կփորձի նաեւ Ասիայից դուրս մղել Միացյալ Նահանգներին՝ այնպես, ինչպես իրենք՝ ամերիկացիները, մեծ տերություններին դուրս մղեցին Արեւմտյան կիսագնդից:

Պակաս կարելու է նաեւ այն փաստը, որ Չինաստանի համար տարածաշրջանային գերիշխանությունը թայվանը վերադարձնելու, թերեւս, միակ հնարավորությունն է: Ընդ որում, Չինաստանի ղեկավարությունն ու ժողովուրդը լավ են հիշում անցած դարի իրադարձությունները, երբ ճապոնիան ուժեղ էր, իսկ Չինաստանը՝ թույլ:

Պատմական փորձը ցույց է տալիս, թե հատկապես ամերիկյան ղեկավարությունն ինչպես է արձագանքում Ասիայում գերիշխանություն հաստատելու Չինաստանի փորձերին: Միացյալ Նահանգներն իր շուրջը հավասար ախոյաններ չի հանդուրժում: 20-րդ դարում նրանք պարզորոշ ցուցադրեցին, որ մտադիր են մնալ միակ տարածաշրջանային հեգեմոնն աշխարհում: Ուստի ԱՄՆ-ը Չինաստանի նկատմամբ կվարի զսպման քաղաքականություն եւ, վերջին հաշվով, կփորձի նրան այն աստիճան թուլացնել, որ նա ի վիճակի չլինի գերիշխանության հասնելու Ասիայում: Ըստ էության, Միացյալ Նահանգները Չինաստանի հանդեպ մոտավորապես այնպիսի գիծ կանցկացնի, ինչպիսին սառը պատերազմի շրջանում ԽՍՀՄ նկատմամբ էր:

Չինաստանն իսկապես չի տիրապետում այնպիսի ռազմական ներուժի, որը թույլատրի նրան դիմակայել ԱՄՆ-ին: Սա բացարձակ ճշմար-

տություն է՝ առայժմ: Բայց մենք խոսում ենք այն իրավիճակի մասին, որ կարող է ձեւավորվել 2025 կամ 2030 թվականներին, երբ Չինաստանը կկարողանա Միացյալ Նահանգներին դիմակայելու համար բավականաչափ ռազմական ուժ կուտակել: Ի՞նչ տեղի կունենա, եթե Չինաստանի համախառն ներքին արդյունքը կտրուկ աճի, եւ այն տիրապետի առավել ահեղ զինուժի, քան հիմա է: Մեծ տերությունների պատմությունը հնարավորություն է տալիս այս հարցին միանշանակ պատասխան տալ. Չինաստանը փորձելու է ամերիկացիներին դուրս մղել Ասիայից եւ գերիշխանություն հաստատել տարածաշրջանում: Ու եթե դա նրան հաջողվի՝ թայվանյան խնդիրը լուծելու հարցում նա կհայտնվի կատարյալ վիճակում:

Վիթսարի առավելությունը, որն այսօր ունի Միացյալ Նահանգները, այն է, որ Արեւմտյան կիսագնդի ոչ մի պետություն ի վիճակի չէ սպառնալ նրա գոյությանը կամ անվտանգության շահերին: Ուստի ԱՄՆ-ը կարող է առանց լուրջ խոչընդոտների «աշխարհը չափչփել»՝ անախորժություններ սարքելով ուրիշների «բակերում»: Մյուս պետություններին, որոնց թվում, բնականաբար, նաեւ Չինաստանն է, միավորում է այն ընդհանուր շահագրգռվածությունը, որ անախորժություններ սարքեն հենց Միացյալ Նահանգների «բակում»՝ ստիպելով ամերիկացիներին սեւեռելու ուշադրությունն այդ գոտու վրա: Ես շատ կցանկանայի ապագային նայել մեծ լավատեսությամբ, սակայն միջազգային քաղաքականությունը տիպիկ ու վտանգավոր գործ է: Ոչ մի բարի կամք չի բավականացնի՝ անվտանգության ոլորտում սուր մրցակցությունը մեղմելու համար, որը կսկսվի, երբ Ասիայում երեւան գա տարածաշրջանային գերիշխանության թեկնածու:

Foreign Policy, ԱՄՆ

ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՅԱՄԱՏԵՂՈՒՄ

(հատվածներ **Սամուել Չանտինգտոնի**՝ ֆրանսիական «Le Nouvel Observateur» պարբերականին վերջերս տված հարցազրույցից)

Չարլզ – Ձեր «Ո՞վ ենք մենք» գրքում դուք խոսում եք մշակույթների ընդհարման եւ ամերիկյան ազգ-պետությունում որոշ խմբերի ինտեգրման անհնարինության մասին: Շարունակո՞ւմ է, արդյոք, այս դրույթը ձեր այնքան աղմուկ հանած «Քաղաքակրթությունների բախում» գրքի միտքը:

Պատ.– «Քաղաքակրթությունների բախում» գրքում ես գրել եմ, որ սառը պատերազմի ավարտից հետո ձեւավորված իրողությունում գաղափարախոսական հակամարտություններին եկան փոխարինելու մշակույթների, էթնոսների, կրոնների բախումները: Ես դրել եմ, մասնավորապես, իսլամական եւ արեւմտյան մշակույթների խաղաղ գոյակցության հարցը: «Ո՞վ ենք մենք» գրքում ես ուսումնասիրում եմ մշակութային պառակտումն իմ սեփական երկրում եւ այն ազդեցությունը, որ նա կարող է թողնել ամերիկյան ինքնության վրա:

Չարլզ– Ձեր գրքի հիմնական դրույթը՝ իսպանամեքսիկական բաղադրիչն ուձացնելու ամերիկյան հասարակության անկարողությունը, տարօրինակ է թվում: Դա սադրա՞նք է, թե՞ նախագուշակություն:

Պատ.– Իմ դրույթը խարսխված է իրականության ուսումնասիրման եւ վիճակագրական տվյալների վրա: Դրանք ակնառու կերպով ցույց են տալիս իսպանամեքսիկական համայնքում ներգաղթողների աճ, որոնց պահվածքը ոչ մի ընդհանրություն չունի այն բնակչության պահվածքի հետ, որին մինչ Առաջին աշխարհամարտն ԱՄՆ բերեց ներգաղթի ալիքը: Ես չեմ դատապարտում ներգաղթը, որը միշտ եղել է ԱՄՆ կառուցվածքային բաղկացուցիչը: Ես լոկ պնդում եմ, որ եթե այդ միտումն այսուհետ էլ դիտվի, ապա ԱՄՆ-ը կդառնա երկու մշակույթի ու երկու լեզվի երկիր:

Նայենք մեքսիկական ներգաղթի ընդհանուր բնութագրերին: Նրա ծավալները, ազգակցության սկզբունքը, գաղտնի բնույթը, տարածքային կուտակումները, պատմական առաջնությունը բացատրում են ուձացման դժվարությունները, որը լեզվական, կրթական, մասնագիտական որակավորման, քաղաքական կյանքին մասնակցության եւ խառնամուսնությունների հարցերում մնում է թույլ: Այս ներգաղթյալներն ապրում են ԱՄՆ-ում, բայց նախկինի պես իրենց մեքսիկացի են զգում: Սա սպառնալիք է ազգային ինքնությանը եւ քայլ՝ այն հասարակության կողմը, որտեղ համագոյակցում են մի քանի հակոտնյա էթնոսներ: Սա հակասում

է ԱՄՆ խորհրդանիշ «հնոցին», որտեղ խառնվել են տարբեր էթնոսներ:

Հարց—Ձեզ չի՞ թվում, թե ձեր տվյալները չափից ավելի հոռետեսական են: Տարբերությունները հանգեցնում են անհատների փոխադարձ հարստացման՝ չխոսելով արդեն այն ծառայությունների մասին, որ մեքսիկական ներգաղթը մատուցում է ամերիկյան տնտեսությանը:

Պատ.—Վերջին վիճակագրական տեղեկությունները հաստատում են իմ տեսակետը: Մեքսիկական ծագումով ներգաղթյալներն անգլերենի խնդիր ունեն եւ կենտրոնանում են անկլավներում. երեկ՝ Ֆլորիդայում ու Մայամիում, այսօր՝ Յրվ. Կալիֆորնիայում, Տեխասում եւ Արիզոնայում: Չնայած հատուկ ծրագրերին, նրանց երբեմն հարկ է լինում անգլերենի ուսուցման վրա երեք տարի ծախսել: Երբ Մեքսիկայի նախագահ Վիսենթե Ֆոքսը դիմում է երկրի 100 մլն եւ արտասահմանում ապրող 23 մլն մեքսիկացիներին, վերջիններիս բացեիբաց կոչ է անում պահպանել սեփական մշակույթը: Ինչ վերաբերում է ամերիկյան տնտեսությանը մատուցած ծառայություններին, ես դրանք չեմ վիճարկում, բայց չարժե մոռանալ, որ մեքսիկացի ներգաղթյալներն ԱՄՆ են գալիս արագ հարստանալու պատրանքով, սակայն նրանք չեն ցանկանում դառնալ ամերիկացի:

Ես ներգաղթի նկատմամբ թշնամանք չեմ տածում եւ չեմ կարծում, թե աղետից խուսափել հնարավոր չէ: Շվեյցարիայի, Կանադայի կամ Բելգիայի փորձը ցույց է տալիս, որ կարելի է ապրել երկու կամ երեք պաշտոնական լեզու ունեցող երկրում: Սակայն երկքաղաքացիությունը կամ ինտեգրումից հրաժարումը թեմաներ են, որոնցով զինվել են ծայրահեղ աջ հոսանքի առաջնորդները:

Մյուս վտանգը շոշափում է բուն ամերիկյան ինքնությունը: Այն կապված է ընտրախավերի աշխարհաքաղաքացիացման, ապագայնացման հետ՝ պայմանավորված գլոբալացումով, եւ այդ բոլորը հարուցում է հայրենասիրաբար տրամադրված հասարակական կարծիքի խիստ անհանդուրժողականությունը: Անբնական է, երբ ամերիկյան հասարակության համախմբման համար հարկավոր է լինում ահաբեկչական սպառնալիքի աճ՝ ինչպես սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո:

Հարց — Սակայն, ընդունելի՞ է, արդյոք, ամերիկյան մոդելը (ինչպես եւ ֆրանսիական հանրապետության մոդելը)՝ տարբեր էթնիկ խմբերի խառնումը մեկ «ծուլման կաթսայում»:

Պատ.— Ծայրահեղության հասցված այս մոդելը դառնում է սպառնալիք: Տեսեք, թե ինչ ճնշում է գործադրում Եվրոպայի վրա մահմեդական համայնքը: Ֆրանսիայում ուժեղ են աշխարհիկ ավանդույթները. այստեղ կարողացան համաձայնության գալ Մահմեդական պաշտամունքի ֆրանսիական խորհրդի հետ, սակայն չադրա կրելու հարցում կոշտ դիրք ընդունեցին: Բայց Իտալիայում մահմեդական համայնքը պահպանողական կա-

ռավարությունից ստացավ թույլտվություն, որ առանձին դպրոցներում պատերից հանվի խաչելության նշանը, եւ պահանջվեց կոմունիստների օգնությունը, որպեսզի իր տեղը վերադարձվի իտալական ինքնության այս խորհրդանիշը:

ԱՄՆ հաստատուն արժեքները չպետք է լվացվեն ներգաղթի ալիքներով, որոնք մերժում են անգլոբոլոքական մշակություն առաջացած հավատամքը, որի հիմքում դրված են անգլերենը, բողոքականությունը, անհատականությունը, աշխատանքային բարոյականությունը եւ հավատն առ այն, որ մարդիկ ի գորու են երկրի վրա ստեղծել դրախտ:

Չարդ—«Քաղաքակրթությունների բախում» գրքի լույսընծայումից հետո ձեր շուրջն աղմուկ առաջացավ. կարծես գիրքը իսլամի եւ Արեւմուտքի միջեւ պատերազմի կողմնակիցների համար ալիքի հանդիսացավ:

Պատ.— Ես երբեք չեմ ասել, թե իսլամի եւ Արեւմուտքի միջեւ բախումն անխուսափելի է: Նրանք, ովքեր ինձ համարում են դժբախտության գուշակ, ում նախագգուշացումները պետք է իրականանան, սխալվում են կամ էլ ինձ միտումնավոր կերպով սխալ են մեկնաբանում: Սառը պատերազմի ժամանակաշրջանում քաղաքական հարցերի փորձագետները, նկարագրելով միջուկային պատերազմը, այն կանխելու ուղղությամբ բազմաթիվ միջոցներ էին ձեռնարկում՝ բանակցություններ, բանավեճեր. եւ աղետ տեղի չունեցավ: Սա հենց այն է, ինչով արդեն տասը տարի ես զբաղվում եմ: Ես բաց չեմ թողնում ո՛չ մի առիթ, որպեսզի ասեմ, որ դեռ հնարավոր է խուսափել ընդհարումներից, անցկացնել կամուրջներ:

Դժբախտաբար, վտանգն աճում է. Չեչնիայի պատերազմի ու սեպտեմբերի 11-ի դեպքերի հետ կապված՝ վարկածը դառնում է ճշմարտանման: Պահանջելով անհավատների վտարում Սուրբ երկրից՝ Ուսամա բեն Լադենը Արեւմուտքին պատերազմ հայտարարեց: Խոսելով «խաչակրաց արշավանքի» մասին՝ Բուշն ավելի սրեց իրավիճակը: Իրաքի գրավումը մահմեդականների կողմից ընկալվեց որպես պատերազմ իսլամի դեմ: Ակներեւ է, որ այդպես գործելով ԱՄՆ-ը սնում է ահաբեկչությանը եւ արմատականներին հիմք տալիս՝ խոսել կրոնական պատերազմի մասին:

Չարդ—Այն գաղափարը, թե ԱՄՆ-ը կարող է ուժով պարտադրել ժողովրդավարության սեփական հայեցակարգը, ձեզ համար ընդունելի՞ է:

Պատ.— Ժողովրդավարությունը պարտադրել չի՛ կարելի: Անհրաժեշտ է, որ այն աճի երկրի միջավայրից՝ որպես ծաղիկ, որը հետո թռչնում է: Սա չի նշանակում, թե ԱՄՆ-ը կամ Եվրոպան չեն կարող օժանդակել ժողովրդավարության զարգացմանը, ինչպես նրանք վարվում են Արեւելյան Եվրոպայում, որտեղ առաջ էլ եղել են ժողովրդավարության ավանդույթներ: Իսկ ժողովրդավարության հաստատումն Իրաքում շատ երկար գործընթաց է...

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դավիթ Յովհաննիսյան ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	1
Ռուբեն Սաֆրաստյան ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ	6
Գագիկ Տեր-Հարությունյան ԱՄՆ–ԻՐԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ	12
Արսեն Հակոբյան ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ	17
Սարգիս Հարությունյան ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ	22
Արաքս Փաշայան ԻՐԱՔՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	28
Սեւակ Սարուխանյան ՆԱՎԹԻ ԳՈՐԾՈՆԸ ԱՄՆ–ՉԻՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	33
Զբիգնեյ Բժեգիսկի, Ջոն Միրսհայմեր ՀՍԿԱՆԵՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ	37
Սամուել Հանտինգտոն ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂՈՒՄ	42

*Շապիկի վրա պատկերված է
Հռոմկլա բերդը (Կիլիկիա)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: